

Դավադրության տեսությունները և հակագենդերային արշավները կորոնավիրուսի համատեքստում

Յետադուտական տեղեկատվության
հավաքագրումը և քարտեզագրումը՝
Ագապի Իվանյանի

Յետադուտող հեղինակներ՝
Մարիամ Խալաթյան
Նվարդ Մարգարյան



Խմբագիր՝
Արփի Մանուսյան

**Դավադրության
տեսությունները և
հակագենդերային
արշավները
կորոնավիրուսի
համատեքստում**



Սոցիոսկոպ 34
2021

**Հետազոտական տեղեկատվության
հավաքագրումը և քարտեզագրումը՝**

Ազապի Իվանյանի

Հետազոտող հեղինակներ՝

Մարիամ Խալաթյան

Նվարդ Մարգարյան

Խմբագիր՝

Արփի Մանուկյան

Սրբագրումը՝

Ազնիվ Նասյանի

Շարվածքը և ձևավորումը՝

Նորա Գալֆայանի

Վերլուծական գեկույցը հիմնված է սոցիոլոգիական հետազոտության վրա, որն իրականացրել է «Սոցիոսկոպ» ՀԿ-ն «Մարդու իրավունքների աջակցության մեխանիզմ. արագ արձագանքման միջամտություն» (Human rights support mechanism: rapid response intervention) ծրագրի շրջանակում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության և «Մարդու իրավունքների տուն Երևան» ՀԿ-ի ֆինանսական օժանդակությամբ:

*Բովանդակության համար պատասխանատու է միայն
«Սոցիոսկոպ» ՀԿ-ի վերլուծական թիմը:*

| Բովանդակություն

ՄՈՒՏՔ

Հետազոտության
մեթոդաբանական շրջանակը

2020 թվականին «Սոցիոսկոպ» ՀԿ-ն հրատարակեց «Հակա-գենդերային արշավների գործունեությունը, հռետորաբանությունը և նպատակները հետհեղափոխական Հայաստանում» ուսումնասիրությունը, որը վեր է հանել սեռականության և գենդերային հարցերի շուրջ առկա հակագենդերային¹ հռետորաբանությունը և դիսկուրսիվ միջոցները, որոնցով թիրախավորվում են գենդերային հարցերով զբաղվող իրավապաշտպանները և ակտիվիստները: Այս հետազոտությունը վերջինիս տրամաբանական շարունակությունն է, որի նպատակն է հավաքագրել և վերլուծել համավարակի ընթացքում թափ առած հակագենդերային հռետորաբանությունը և դավադրության տեսությունները, որոնցով թիրախավորվում են առաջադիմական քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ոտնահարվում է հանրային շահը, և մանիպուլացվում են հանրային դիրքորոշումները:

Հետազոտական նպատակով պայմանավորված՝ առանձնացրել ենք հետազոտական հետևյալ հարցերը.

- 1 | Գլոբալ և տեղական ի՞նչ դիսկուրսներ են ընկած կորոնավիրուսի շուրջ հյուսվող դավադրության տեսությունների հիմքում:
- 2 | Ովքե՞ր են դավադրության տեսությունների թիկունքում կանգնած խմբերը և ուժերը, ի՞նչ քաղաքական շահեր և օրակարգեր ունեն:
- 3 | Ի՞նչ ուղերձներ են շրջանառում դավադրության տեսությունների հեղինակները առաջադիմական քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների, սեռականության և գեն-

1. Վերլուծական աշխատանքում հակագենդերային արշավներ ասելով նկատառվել են հակաիրավապաշտպան և հետադիմական այն արշավները, որոնց հարձակումների կիզակետը գենդերային հավասարության հարցն է, ինչի հետ անբավարար լիորեն կապված են հոմոֆոբ տրամադրությունների գեներացման նպատակը և ԼԳԲՏ մարդկանց լուսանցքում պահելու ձգտումը:

դերային հարցերի շուրջ: Դրանք ի՞նչ առանձնահատկություններ և ընդհանրություններ ունեն գլոբալ դավադրական դիսկուրսների և հակազենդերային արշավների հետ:

- 4** | Ինչպե՞ս են դավադրության տեսություններն ազդում հանրային առողջապահության, լայն իմաստով՝ հանրային շահի և մարդու իրավունքների ոտնահարումների վրա:

Հետազոտական հարցերը դիտարկելով որպես ուղենիշ՝ հավաքագրել և երկրորդային վերլուծության ենթ ենթարկել թեմայի շուրջ արդեն իսկ արված տեղական և միջազգային հետազոտություններ և վերլուծություններ: Այնուհետև իրականացրել ենք համավարակի ընթացքում թափ առած դավադրության տեսությունների և մանիպուլյատիվ դիսկուրսների քարտեզագրում, որոնցով թիրախավորվում էին մարդու իրավունքները և գենդերային հարցերը, առաջադիմական քաղաքացիական հասարակությունը:

Քարտեզագրումն իրականացվել է առցանց մեդիայի և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով՝ առանձնացնելով համավարակի ընթացքում հանրային և քաղաքական առավել լայն արձագանք ստացած դավադրության դիսկուրսները և շահարկումները: Քարտեզագրման հիման վրա ընտրել ենք առավել տիպական և խիտ դեպքերը:

Աշխատանքը բաղկացած է երկու բաժիններից և ամփոփումից:

Բաժին 1. Կորոնավիրուսի շուրջ դավադրության տեսությունների, դրանց դեմ պայքարի գլոբալ և տեղական առանձնահատկությունները հատվածում հավաքագրված են կորոնավիրուսի շուրջ գլոբալ տարածում ունեցող ապատեղեկատվությունները և դավադրության տեսությունները, ինչպես նաև պետությունների կողմից դրանց դեմ պայքարի փորձերը:

Բաժին 2. Հակազենդերային արշավները կորոնավիրուսի համատեքստում մասում առանձնացրել ենք առաջադիմական քաղաքացիական հասարակության թիրախավորման, կանանց և գենդերային, ինչպես նաև մարդու իրավունքների և հանրային առողջության շահարկման հարցերը:

Ամփոփում բաժնում հակիրճ ի մի են բերվել կորոնավիրուսի համավարակի ընթացքում թափ առած դավադրության տեսությունների և դրանք հեղինակող խմբերի հիմնական ուղերձներն ու նպատակները, հետազոտության հիմնական եզրահանգումները:

Բաժին 1

Կորոնավիրուսի շուրջ
դավադրության տեսությունների,
դրանց դեմ պայքարի գլոբալ և
տեղական
առանձնահատկությունները

2019 թվականի դեկտեմբերին Չինաստանի Կուհան քաղաքում բռնկվեց նոր տեսակի կորոնավիրուս (Covid 19) շնչառական վարակը, որը հետզհետե տարածվեց ամբողջ աշխարհում: 2020 թվականի մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համավարակի տարածման աշխարհագրական սահմաններն արդեն իսկ ներառում էին աշխարհի երկրների մեծ մասը, հայտարարեց, որ կորոնավիրուսի տարածումը հասել է պանդեմիայի մակարդակի²: Մինչ օրս (հետազոտության իրականացման պահին) աշխարհում կորոնավիրուսի վարակը հայտնաբերվել է ավելի քան հարյուր միլիոնավոր մարդկանց շրջանում, ավելի քան երեք միլիոն մարդ մահացել է համավարակի հետևանքով³:

2020 թվականի մարտի 1-ին Հայաստանում գրանցվեց կորոնավիրուսի վարակման առաջին դեպքը⁴: Հայաստանում ևս, ինչպես աշխարհի շատ երկրներում, հարյուր հազարավոր մարդիկ վարակվեցին կորոնավիրուսով, հազարավոր մարդիկ արդեն իսկ մահացել են համավարակի պատճառով: Ներկայումս տարբեր երկրներում մշակվում և փորձարկվում են պատվաստանյութեր, սկսվել է համավարակի դեմ պատվաստումների գործընթացը: Ադուհանդերձ, համավարակի դեմ պայքարի որևէ մեթոդ դեռևս չի հանգեցրել վարակածության չափերի կտրուկ նվազման:

Արդեն ավելի քան մեկ տարի է՝ կորոնավիրուսի տարածումն ուղեկցվում է ինչպես դրա մասին աճող տեղեկատվությամբ, այնպես էլ ապատեղեկատվությամբ: Ընդ որում՝ համավարակի

2. World Health Organization (WHO). @WHO. (2020, March 11). *Media briefing on #COVID19 with @DrTedros. #coronavirus.* [Tweet]. Twitter. վերցվել է՝ http://bit.ly/WHO_MediaBriefing

3. Worldometer. (2021, May 17). *COVID-19 Coronavirus Pandemic.* Worldometers.info. վերցվել է՝ <https://www.worldometers.info/coronavirus/>

4. Միրզոյան, Ա. (2020, մարտ 11). *Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարել է նոր կորոնավիրուսի՝ պանդեմիայի մակարդակին հասնելու մասին.* Զեռք. վերցվել է՝ <https://hetq.am/hy/article/114312>

շրջանակում տարածվող ապատեղեկատվությունը ոչ միայն պարունակում է ոչ ճիշտ, հաճախ նաև հանրային առողջությանը վնասող տեղեկություններ, այլև մեծ մասամբ համեմված է դավադրության տեսություններով⁵:

Համավարակի մասին կամ համավարակով պայմանավորված ապատեղեկատվության տարածումը, հատկապես դրա տարածման սկզբնական շրջանում, ուներ ինչպես իրական, այնպես էլ այս կամ այն քաղաքական ուժերի շահերից և օրակարգերից բխող կեղծ դրդապատճառներ: Համավարակի առևտրային տարածվող ապատեղեկատվության իրական պատճառներից կարող ենք մասնավորապես առանձնացնել հետևյալները.

Կորոնավիրուսն իր բնույթով նոր է, նույնիսկ այսօր՝ վարակի առաջին դեպքի գրանցումից ավելի քան մեկ տարի անց, դեռ ամբողջությամբ հետազոտված չէ:

Առողջապահության ոլորտում առաջատար, հեղինակություն ունեցող կազմակերպությունը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն (ԱՀԿ) ինքն էլ համավարակի տարածման տարբեր փուլերում հանդես է եկել (գալիս է) իրարամերժ հայտարարություններով: Օրինակներից ամենակնառուն դիմակներ դնելու/չդնելու երկառածն էր: Այսպես, համավարակի առաջին օրերին ԱՀԿ-ն տարածել էր հայտարարություն, որ առողջ մարդիկ դիմակ դնելու կարիք չունեն: 2020 թվականի ապրիլի 1-ին, իր տարածած մեկ այլ հայտարարությամբ կառույցը հայտարարել էր, որ միայն վարակված պացիենտները և նրանց ինսամոդները պետք է դնեն դիմակ: Իսկ 2020 թվականի հունիսի 5-ին ԱՀԿ-ն բոլորին հորդորեց դնել դիմակ⁶:

5. Կարևոր է ընդգծել, որ պատմականորեն բազմաթիվ համաճարակներ գրեթե մշտապես ուղեկցվել են թե՛ տեղական, թե՛ միջազգային դավադրության տեսություններով և առասպելներով: Մարդիկ իրենց համար անհայտ վարակի սկզբնաղբյուրը սովորաբար հակված են լինում կապել տարատեսակ միջերի հետ կամ ընդհանրապես ժխտել վարակի առկայությունը՝ տեղի ունեցողը կապելով երկնային կամ գերբնական երևույթների հետ: Ֆիդանյան, Դ. (2020, հունիս 4). *Համաշխարհային պատմության շրջանակներում պանդեմիաների շուրջ առկա միջերը*. Tiv1. վերցվել է՝ <https://www.tiv1.am/31779.html>

6. Bayram, A. (2020, July 7). *WHO criticized for "contradictory" COVID-19 statements. UN health agency's guidelines regarding COVID-19 receive public ire for "being late" and "contradictory"*. aa.com.tr. վերցվել է՝ <http://bit.ly/WHO-criticized>

ՀՀ առողջապահության նախարարությունը համավարակի դեմ պայքարում, կարելի է ասել, որդեգրել էր ԱՀԿ հայտարարություններին և ընթացակարգերին հետևելու ռազմավարությունը, և ՀՀ Կառավարության ընդունած որոշումները մեծ մասամբ հիմնավորվում էին ԱՀԿ-ի կողմից ընդունված որոշումներով: Սակայն, քանի որ ԱՀԿ-ի հայտարարություններում կային հակասություններ, և դրանցից մի քանիսը նույնիսկ իրարամերժ բովանդակություն ունեին, ՀՀ առողջապահության նախարարության հայտարարություններն էլ հանրության շրջանում ընկալվում էին իբրև հակասական: Այսպես, 2020 թվականի մարտի 27-ին ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը Ծաղկաձորի Գրողների միության հանգստյան տանը մեկուսացած քաղաքացիներին այցելության ժամանակ այն հարցին, թե ինչու դիմակ չի դրել, պատասխանում է. «...*Դրսում դիմակ կրելու անհրաժեշտություն չկա, իսկ Սպարտակը կրում է միայն նրա համար, որովհետև դժվար է իր համար անընդհատ դիմակ դնել, հանելը*»⁷: Իսկ արդեն հունիսի 3-ին փոխվարչապետ Տիգրան Ավինյանը հայտարարում է, որ Հայաստանում բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս բոլոր հանրային բաց տարածքներում դիմակ դնելը հետայսու պարտադիր է⁸:

Կորոնավիրուսի համավարակի մասին ապատեղեկատվությունն աշխարհում ոչ միայն պայմանավորված էր իրական խնդիրներով, այլ նաև ուղղորդված բնույթ էր կրում: Հետաքրքիր է նկատել, որ աշխարհի գրեթե բոլոր երկրներում իշխանությունները համավարակի դեմ պայքարի էական խոչընդոտներից էին համարում համավարակի մասին տարածվող ապատեղեկատվության մեծ ծավալները⁹: Ավելին, տարածվող ապատեղեկատվությանը զուգահեռ, ծայրահեղ աջ գաղափարաբանությունն ունեցող անհատները և քաղաքական ու քվազի քաղաքական խմբերը աշխարհի տարբեր անկյուններում վերածնակերպեցին ռասիստական և խտրական իրենց ուղերձները Քովիդ-19 համավարակի համատեքստում՝

7. Torosyan, A. (2020, March 27). *Ծաղկաձոր. Գրողների միության հանգստյան տուն*. [Ֆեյսբուքյան ուղիղ եթեր]. Facebook. <https://bit.ly/3qQYgeI>

8. Ազատություն. (2020, հունիս 3). *Հայաստանում այսուհետ հանրային վայրերում դիմակ կրելը դառնում է պարտադիր*. վեբգլեյ է՝ <https://bit.ly/3hCPJrh>

9. World Health Organization, (2020, September 23). *COVID-19 pandemic: countries urged to take stronger action to stop spread of harmful information*. who.int. Վեբգլեյ է՝ http://bit.ly/covid-19_harmfull-info

այն ներկայացնելով որպես «հարձակում եվրոպական, արևմտյան» քաղաքակրթությունների և մարդկանց վրա, որպես արևելքի կողմից արևմուտքի բնաջնջման փորձ¹⁰: Ավելին՝ այս ծայրահեղական խմբերը կարողացան օգտագործել արագ տարածվող համավարակը, դրա շուրջ տեղեկատվության և գիտելիքի պակասը և առկա քաղաքական լարումները սեփական օրակարգերն առաջ մղելով՝ հանրային բևեռվածությունները սրելու, հասարակություններում աններդաշնակությունն սերմանելու համար՝ որպես «համակարգը տապալելու» նախապայման¹¹:

Համավարակի համատեքստում արևմտյան տարբեր երկրների ծայրահեղ աջ խմբերը ակտիվորեն օգտագործում են տեխնոլոգիաներ և սոցիալական մեդիայի հարթակներ՝ տարածելով ատելության խոսք, ապատեղեկատվություն, բռնության կոչեր և սրելով ծայրահեղական տրամադրություններ: Հանրության շրջանում որոշակի տարածում ունեցող քաղտեխնոլոգիական քարոզչամեթոդները կամ քվազի լրատվամիջոցները վերածվում են համավարակի շուրջ հանրային վախեր սերմանող գործիքների: Նման, այսպես կոչված, լրատվական կայքերը շարունակաբար տարածում են կեղծ նարատիվներ, նորություններում անում են այնպիսի շեշտադրումներ, որ ձևավորվեն հանրային բարկություն, անհանգստություն և վախ (Applebaum, 2020): Ծայրահեղական աջ տրամադրված խմբերն ու անհատները օգտագործում են համավարակը՝ տարածելու իրենց գաղափարաբանությունը, անդամագրելու մարդկանց իրենց արշավներին և շարժումներին:

Արևմուտքում այս ծայրահեղական տրամադրությունները սրվեցին նաև այն պատճառով, որ Չինաստանն էր կորոնավիրուսի համավարակի օջախը: Այս հանգամանքը պարարտ հող նախապատրաստեց դավադրության այլևայլ տեսությունների ձևակերպման համար, որոնք նաև հենվում էին մշակութային շերտի վրա:

Այս համատեքստում էին, որ հնչեղ դարձան հակասեմիթական կոչերը՝ կորոնավիրուսի համավարակը ձևակերպելով իբրև «աշխարհը կործանելու մասոնական նախագիծ»: Այս դավադրու-

10. Bao Nie, J. (2020, August 25). *In the Shadow of Biological Warfare: Conspiracy Theories on the Origins of COVID-19 and Enhancing Global Governance of Biosafety as a Matter of Urgency*. Springer.com. Վերցվել է՝ <https://link.springer.com/article/10.1007/s11673-020-10025-8>

11. Նույն տեղում

թյան տեսության կողմնակիցներն ու տարածողները մեղադրում են հրեաներին կորոնավիրուսի ստեղծման և տարածման մեջ: Այս «վարկածը» սկսեց առավել արագ շրջանառվել այն ժամանակ, երբ հայտարարվեց, որ իսրայելական բժշկական լաբորատորիաներից մեկը կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի վրա է աշխատում: Սրան անմիջապես հաջորդեց մի տեղեկություն, թե դա «գիոնիստական» պլանն ի կատար ածելու առաջնային քայլերից մեկն է՝ լռեցնելու «հրեաների հակառակորդներին»: Շրջանառվեց մի վարկած, թե Նախ ստեղծվել է վիրուսը, այնուհետև՝ դրա դեմ պայթաբեյոն պատվաստանյութը՝ «մարդկության փրկիչներ»¹² ներկայանալու համար:

Իսկ QAnon¹³ դավադրական խմբավորման ներկայացուցիչները սկսեցին շրջանառել մեկ այլ տեսություն այն մասին, որ կորոնավիրուսի համավարակը կենսաբանական գեներ է, որի նպատակն է ԱՄՆ ներքին քաղաքականության, մասնավորապես 2020 թվականի Նախագահական ընտրությունների վրա ազդելը¹⁴: QAnon համայնքի՝ սոցիալական մեդիայում ազդեցիկ անհատները Թվիթեր միկրոբլոգում ակտիվորեն զովագրում էին «Հրաշք հանքային հավելումը» (Miracle Mineral Supplement), որը, իրենց պնդմամբ, կանխարգելում է Քովիդ-19-ը: Տեխասի եկեղեցիներից մեկն այս հավելումը վաճառում էր 45 ԱՄՆ դոլարով՝ չնայած այն բանին, որ ԱՄՆ Սննդի և դեղերի վարչությունը Նախկինում արդեն Նախագահությանը էր, որ տվյալ դեղամիջոց-հավելումն իր բնույթով վտանգա-

12. statewatch.org. (2020, May 7). *Terrorism in Times of Corona: The development of the terrorist threat as a result of the Covid-19 crisis*. Վերցվել է՝ <http://bit.ly/terrorism-and-corona>

13. QAnon ցանցի դավադրապաշտական տեսությունների առանցքում այն գաղափարն է, որ ԱՄՆ Նախկին Նախագահ Դոնալդ Թրամփը գաղտնի պատերազմ է վարում սատանային պաշտող մանկապիղծների դեմ թե՛ ԱՄՆ կառավարությունում, թե՛ բիզնես ոլորտում, թե՛ մեդիայում: Այս համատեքստում նրանք թիրախավորում էին Նախկին պետքարտուղար, դեմոկրատ Հիլարի Զիլինթոնին՝ հայտարարելով, թե իրենց պայթարը կավարտվի, երբ Նա բանտարկվի: Դավադրապաշտական այս շարժման ներկայացուցիչները 2021 թվականի հունվարին ներխուժեցին ԱՄՆ Կոնգրես, որտեղ ընտրիչների ձայներով Ջո Բայդենը հաստատվեց որպես ԱՄՆ 46-րդ Նախագահ: Նրանք կասկածի էին ենթարկում ընտրությունների արդյունքները, հայտարարում, որ դրանք կեղծված են, իսկ իրենց Նախագահը Դոնալդ Թրամփն է: Տեն Վենդլինգ, Մ. (2021, January 6). *QAnon: What is it and where did it come from?*. [bbc.com](https://www.bbc.com/news/53498434). Վերցվել է՝ <https://www.bbc.com/news/53498434>

14. ISD. (2020, April 9). *Covid-19 disinformation briefing No.2. Far-right mobilization*. Վերցվել է՝ <http://bit.ly/isd-COVID-19-Disinformation>

վոր է, կարող է մինչև իսկ կյանքին սպառնացող կողմնակի ազդեցություններ ունենալ¹⁵:

Մարդկանց մի շրջանակ էլ տարածում էր տեղեկություններ, թե կորոնավիրուսի փոխանցումը խթանում են ինտերնետային 5G ալեհավաքները, ինչի արդյունքում էլ ամբողջ աշխարհում կարող է փլուզվել համացանցը: Թեև կորոնավիրուսի տարածման և 5G աշտարակների փոխկապվածության և փոխառնչության մասին գավեշտալի թվացող ապատեղեկատվությունը շատ շուտ հերքվեց, սակայն միևնույնն է, 5G ալեհավաքների դեմ պայքարողները շարունակեցին հանրային գիտելիքը մանիպուլացնող պնդումներն այն մասին, որ թեև ալեհավաքները հնարավոր է անմիջականորեն կապված չեն կորոնավիրուսի տարածման հետ, սակայն խիստ բացասական ազդեցություն ունեն մարդկանց առողջության վրա:

Կարևոր է ընդգծել, որ ծայրահեղական աջ խմբավորումները Քովիդ-19 համավարակով պայմանավորված ի հայտ եկած տեսություններն ակտիվորեն տարածելուն զուգահեռ առաջ էին մղում իրենց հակաժողովրդավար և հակաիրավապաշտպան, հակագենդերային, հակամիգրացիոն, հակապատվաստումային, հակասորոսական, հակաաբորտային դիսկուրսներ և քաղաքականություններ:

Դավադրական տարաբնույթ ցանցերի և խմբավորումների գործունեությունն ուսումնասիրելիս նկատում ենք հստակ միտում. համավարակի համատեքստում մեծ թափ ու շրջանառություն ստացան, այսպես կոչված, էլիտաների մասին գրույցները: Խոսքը մասնավորապես բիզնես մագնատներ, խոշոր կապիտալի սեփականատերեր Բիլ Գեյթսի¹⁶, Տորջ Սորոսի, Ռոդշիլդների և Ջեֆ Բեզոսի մասին է: Դավադրությունների առանցքում այն վարկածն էր, որ վիրուսը նպատակայնորեն ստեղծված սոցիալական վերահսկողության գործիք է, «կենսաբանական զենք»՝ ոչնչացնելու համաշխարհային բնակչության մի մասին, բիզնես պլան, որ վիրուսի տա-

15. The Conversation. (2020, April 9). *QAnon conspiracy theories about the coronavirus pandemic are a public health threat*. Վերցվել է՝ <http://bit.ly/theconversation-health-threat>

16. Lynas, M. (2020, April 20). *COVID: Top 10 current conspiracy theories*. Cornell Alliance for Science. Վերցվել է՝ <http://bit.ly/top-10-conspiracy-theories>:

րաձման արդյունքում հարստություն և եկամուտ կբերի խոշոր կապիտալի սեփականատերերին^{17,18}:

Առավել տարածված և հանրային առողջապահության տեսանկյունից վտանգավոր միջերից էր վարակի գոյության մերժումը: Ավելին՝ այս մերժողականությունը դարձավ որոշ պետությունների քաղաքականությունը: Թուրքմենստան, օրինակ, չի վարում կորոնավիրուսի վիճակագրություն: Ավելին՝ Թուրքմենստանում արգելված է օգտագործել «կորոնավիրուս» բառը. մեծ է հավանակալությունը, որ այն արտաբերողը կծերբակավի¹⁹: 1994 թվականից Բելառուսի Նախագահ Ա. Լուկաշենկոն ծաղրել էր կորոնավիրուսի համավարակը՝ այն անվանելով «մոլեգնություն և փսիխոզ», և առաջարկել կորոնավիրուսի կանխարգելման սեփական «ամենագործուն» միջոցը՝ «օրական 40-50 գրամ օղի և չոր սառուսա»²⁰:

Հետաքրքրական է նաև նկատել, որ աջ ծայրահեղական խմբավորումների հռետորաբանությանը զուգահեռ, համավարակի համատեքստում որոշ երկրների ձախ ծայրահեղական խմբերն ու արշավները ևս բավականին ակտիվացան: Խոսքը մասնավորապես Իտալիայի և Հունաստանի ձախերի մասին է, որոնք քննադատում էին պետություններին ու նրանց կառավարություններին ճգնաժամին ոչ համարժեք պատասխանելու համար՝ մասնավորապես շեշտելով առողջապահական համակարգի թերֆինանսա-

17. Institute for Strategic Dialogue. (2020, May 12). *Covid-19 disinformation briefing No.3 Far-right exploitation of Covid-19*. Վերցվել է՝ <http://bit.ly/isd-weekly-briefing>:

18. Կարևոր է ընդգծել, որ թեև համավարակն առաջ բերեց սոցիալ-տնտեսական ճգնաժամ, զրկեց հազարավոր մարդկանց աշխատանքից աշխարհի բազմաթիվ անկյուններում, խոշոր կապիտալի սեփականատերերի եկամուտները շարունակեցին աճել միլիարդավոր դոլարներով: Բիլ Գեյթսը, Էլոն Մասկը, Ջեֆ Բեզոսը և մի շարք այլ միլիարդատերեր «բոլորի հետ նույն նավում չէին»: Սոցիալ-տնտեսական անհավասարությունների խորացման հետևախորքում հարուստների էլ ավելի հարստացումը հանրային շահի ոտնահարումների և կապիտալի անհավասար բաշխման տեսանկյուններից խորքային և արժեքավոր քննադատությունների է(ր) արժանատու հետազոտական, գիտական, ակտիվիստական համայնքների կողմից, մինչդեռ դավադրական տեսությունները զանգվածայնացնող խմբերն ու անհատները ելևում էին հանրային գիտակցությունը մանիպուլացնելու նպատակադրությունից:

19. Kakissis, J. (2020, March 31). *Turkmenistan Has Banned Use Of The Word "Coronavirus"*. npr. Վերցվել է՝ <http://bit.ly/npr-coronavirus-live-updates>

20. Dixon, R. (2020, March 27). *No lockdown here: Belarus's strongman rejects coronavirus risks. He suggests saunas and vodka*. The Washington Post. Վերցվել է՝ <http://bit.ly/Belarus-rejects-coronavirus-risks>

վորման հանգամանքը: Ձախերը հատկապես քննադատում էին պետությունների նախաձեռնած սահմանափակումները՝ որպես քաղաքացիների վերահսկման մեթոդ: Ավելին՝ վերջիններս ևս կասկածի էին ենթարկում դիմակներ դնելու պարտադրանքն իբրև վարակի դեմ պայքարի արդյունավետ միջոց՝ դիտարկելով հարցը կորպորատիվ շահերի, մասնավորապես դիմակների բիզնեսի խրախուսման տեսանկյունից²¹: Սուր քննադատության արժանացան նաև այն օրենքներն ու սահմանափակումները, որոնք ընդունվեցին համավարակի «վերահսկման նպատակով» և ունեին մի շարք խնդրահարույց ասպեկտներ, ինչպես, օրինակ՝ խոսքի ազատության սահմանափակումները, մարդկանց տեղաշարժի վերահսկման նպատակով ընդունված որոշումները, որոնցով տեխնոլոգիական տարբեր կազմակերպությունների հնարավորություն էր տրվել հեռախոսային հավելվածների միջոցով մարդկանց տեղաշարժի մասին տեղեկատվությունից զատ հավաքելու անձնական բնույթի տեղեկատվություն:

Այս որոշումներում հստակորեն արձանագրված և սահմանված չէր, թե հատկապես ինչպիսի տեղեկատվություն են ստանալու այն կազմակերպությունները, որոնք հետևում էին օգտատերերի տեղաշարժին, ինչպես էին պահելու իրենց կողմից հավաքագրված տեղեկատվությունը, ինչպես նաև հետագայում ինչպես էին օգտագործելու կամ ոչնչացնելու դրանք²²:

Ամփոփելով կարող ենք ասել, որ համաշխարհային մակարդակում կորոնավիրուսի համավարակը պարարտ հող դարձավ դավադրության այլևայլ տեսությունների զարգացման ու տարածման համար: Դավադրության տեսություններ մշակողները հիմնականում հետապնդում են քաղաքական, տնտեսական և մեդիա շահեր, ստորադասում և նսեմացնում են հանրային շահը, իրենց քաղաքականություններով մանիպուլացնում են հանրային դիրքորոշումները և գիտելիքը: Մյուս կողմից՝ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ դավադրապաշտական նման տեսությունների և ապատեղեկատվության տարածումն էլ ավելի լայն թափ ստացավ

21. statewatch.org. (2020, May 7). *Terrorism in Times of Corona: The development of the terrorist threat as a result of the Covid-19 crisis*. Վերցվել է՝ <http://bit.ly/terrorism-and-corona>

22. Diaz, A. (2020, April 7). *Coronavirus, Location Tracking, and Civil Liberties*. Brennan Center for Justice. Վերցվել է՝ <http://bit.ly/coronavirus-tracking-civil-liberties>

տեղեկատվական բացի, կառավարությունների կողմից կորոնավիրուսի համավարակի շուրջ հաղորդակցության մեջ առկա բացերի հետևանքով:

1.1. Տեղական դավադրական դիսկուրսների քաղաքական երանգները

Քովիդ-19 համավարակը և դրա դեմ պայքարի միջոցառումներն, իհարկե, հայտնվեցին հանրային-քաղաքական տարաբնույթ քննարկումների առանցքում նաև Հայաստանում: Հայաստանում կորոնավիրուսի համավարակի շուրջ դավադրության տեսությունները կապվում են գործող իշխանության քննադատության, արտաքին ուժերի ազդեցության, «սորոսականության», գենդերային հարցերի շահարկումների, «ազգային արժեքները պահպանելու» գաղափարների հետ, որոնք մեծապես փոխկապված են հակազենդերային արշավների հռետորաբանության հետ:

Կորոնավիրուսի դեմ պայքարը համընկավ քաղաքական տարբեր հնչեղություն ունեցող իրադարձությունների հետ, որոնց այս խմբերը առանձնահատուկ երանգավորում հաղորդեցին: Դավադրության տեսություններն առաջ տանող ուժերը կորոնավիրուսի համավարակը, դրա դեմ պայքարի փորձերն ու քաղաքականությունները շրջանակեցին իրենց օրակարգերի ներքո՝ իրենց թիկունքում ունենալով նախկին իշխանություններին մերձ անհատների և խմբերի քաղաքական շահերը:

Կորոնավիրուսի համավարակի ընթացքում կառավարության կողմից իրականացվող կանխարգելման միջոցառումները հավաքագրելու համար դեռևս մարտի 19-ից ձևավորվեց «Covid-19 Հայաստան» փաստահավաք ոչ ֆորմալ խումբը²³, որն, ըստ խմբի անդամների ինքնաներկայացման, համավարակի ողջ ընթաց-

23. Փաստահավաք խմբի կազմում են բժիշկ, առողջապահության կազմակերպիչ Գևորգ Գրիգորյանը, փաստաբան Տիգրան Աթանեսյանը, Analitik.am լրատվական կայքի ղեկավար Անի Հովհաննիսյանը:

քում ֆեյսբուքյան խմբի²⁴ միջոցով իրականացնում էր մշտադիտարկում, տարբեր ուսումնասիրություններ, որոնք առնչվում էին ՀՀ Կառավարության կողմից կորոնավիրուսի դեմ պայքարի միջոցառումների քննադատությանը: Այս փաստահավաք խումբը համավարակի դեմ պայքարի ընթացքի առողջ և անհրաժեշտ քննադատությունը փոխարինեց Նեդ քաղաքական օրակարգեր առաջ տանելով, իսկ հանրության շրջանում վստահությունն ձեռք բերելու համար նրանք թիմում ներգրավեցին նաև բժշկի²⁵ հաշվի առնելով թեմայի առանձնահատկությունը և իրենց պայքարին իբրև թե գիտական հիմնավորումներ տալու համար:

Նախկին իշխանական շրջանակները, մասնավորապես Էդուարդ Շարմազանովը, կորոնավիրուսից մահացության թվերն օգտագործում էին՝ պնդելու, որ համավարակի դեմ պայքարում արդյունավետություն ունենալու համար անհրաժեշտ են կառավարության հրաժարականը և արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացումը²⁶: Կորոնավիրուսը քաղաքական նպատակահարմարության տեսանկյունից օգտագործում էր նաև Նիկոլ Փաշինյանը: Մարտի 12-ին Մալիշկա գյուղում սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի քարոզարշավի ժամանակ Փաշինյանը, անդրադառնալով պետական համակարգում հետհեղափոխական կառավարող ուժին վատաբանող աշխատակիցներին, հայտարարեց. «Կորոնավիրուսը չի վտանգավոր: Այ կորոնավիրուսն իրանք են իսկական, որ մինչև հիմա մեր պետական համակարգի օրգանիզմը քայքայում են: Ու էդ կորոնավիրուսներին իրար հետ հատիկ-հատիկ պինցետով հանելու ենք, տնական արաղով դեզինֆեկցիա անենք ու ուղարկենք իրենց գործերին: Ապրիլի 5-ը սրա մասին է»²⁷:

24. COVID-19 Հայաստան. փաստահավաք խումբ (ա.ա.). [@covid19armenia ֆեյսբուքյան էջ], Facebook. Վերցվել է՝ <https://www.facebook.com/covid19armenia>

25. medialab.am. (2020, մայիս 29). ԱՄՆ ֆինանսավորած Medmedia.am կայքը՝ COVID-19-ի վերաբերյալ ապատեղեկատվության տարածող. *Fip.am*. վերցվել է՝ <https://medialab.am/69094/>

26. Հայաստանի հանրապետական կուսակցություն. (2020, մայիս 25). «Ելքը հրաժարականն է և արտահերթ ընտրությունները». *Էդուարդ Շարմազանով*. վերցվել է՝ <http://www.hhk.am/hy/news/item/2020/05/25/Eduard174765/>

27. *fip.am*. (2020, մայիս 18). Ի՞նչն էր «պինցետով հանում» և «արաղով ախտահանում» Նիկոլ Փաշինյանը. վերցվել է՝ <https://fip.am/11492>

Մի կողմից՝ նախկին իշխանական ուժերի շահարկումները, մյուս կողմից՝ համավարակի հանդեպ կառավարության անլուրջ և անհետևողական մոտեցումը, որ արտահայտվեց նաև սահմանադրական հանրաքվեի²⁸ քարոզարշավի իրականացմամբ, խորացրեց համավարակի քաղաքականացման միտումները. «Վահե Գրիգորյանին առաջ տանելը որպես ՍԴ հնարավոր թեկնածու ավելի կարևոր է, քան հանրային առողջությունը», «Մարդիկ հիվանդանում են, մահանում են, իսկ իշխանությունը զբաղված է ՍԴ դատավորներ փոխելով»²⁹:

Քարոզարշավը դադարեց միայն այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ Փաշինյանը Վայթում քարոզարշավի ժամանակ շփվել էր կորոնավիրուս ունեցող քաղաքացու հետ³⁰: Քարոզարշավից արտակարգ դրության անցումն, ըստ էության, տևեց մեկ օր. մարտի 16-ին Հայաստանում հայտարարվեց արտակարգ դրություն³¹: Օգտվելով կառավարող ուժի անհետևողականություններից՝ հանրային շահը ոտնահարող անհատները և խմբերը սկսեցին արշավներ իրականացնել դիմակները պարտադիր դնելու դեմ, հորդորել հանրությանը չկատարել վարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Համավարակի շուրջ քաղաքական լարվածությունն աճեց 2020 թվականի մարտի 31-ին Լեռնային Ղարաբաղում անցկացվելիք համապետական ընտրությունների և դրանց՝ հայաստանյան իշխանությունների դիրքորոշման համատեքստում: Հայաստանում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարվեց արտակարգ դրություն, սակայն ԼՂ-ում նախընտրական քարոզարշավին ընդառաջ

28. 2020 թվականի փետրվարի 6-ին ՀՀ ԱԺ-ն 88 կողմ, 15 դեմ ձայնով ընդունեց Սահմանադրության փոփոխությունը հանրաքվեով կատարելու նախագիծը: Հանրաքվեի նպատակն էր Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխությունը, որը նախատեսում էր ՍԴ նախագահի Հրայր Թովմայանի և ՍԴ մյուս անդամների լիազորությունների վաղաժամ դադարեցում:

29. livenews.am. (2020, հունիս 30). *Մարդիկ հիվանդանում են, մահանում են, իսկ իշխանությունը զբաղված է ՍԴ դատավորներ փոխելով*. վերցվել է՝ <https://livenews.am/press/2020/48405/30/17/27/>

30. Hetq.am. (2020, մարտ 15). *Նիկոլ Փաշինյանը՝ կորոնավիրուսի շուրջ նոր գարգացումների մասին*. վերցվել է՝ <https://hetq.am/hy/article/114489>

31. e-gov.am. (2020, մարտ 16). *Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին*. վերցվել է՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/>

արտակարգ դրության մասին զրույցներ գրեթե չկային, քանի որ պաշտոնապես ԼՂ-ում կորոնավիրուսով հիվանդացության դեպքեր չկային: Սակայն արդեն ապրիլի առաջին տասնօրյակում ընտրություններից մեկ շաբաթ անց, Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում կորոնավիրուսի բռնկումներ հայտնաբերվեցին³²: Ընդդիմադիր տարբեր ուժեր և խմբեր քննադատում էին կառավարող ուժին, որ ԼՂ-ում չէր հայտարարվում արտակարգ դրություն, և վիրուսը բանակում տարածելու վտանգ կար:

ԲՀՀ Հայաստանի տարբեր ներկայացուցիչների կամ նրանց հետ առնչություններ ունեցող քաղաքացիական հասարակության անդամների այցելությունները Ղարաբաղ (մասնավորապես Արևմուտքի հետ հարաբերությունների խորացման կողմնակից Մասիս Մայիլյանի հետ հանդիպումների շրջանակում), ինչպես նաև Կառավարության կողմից դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների ֆինանսավորումը հանրությանը հրամցվում էին իբրև «սորոսականների» խմբավորում Մայիլյանի շուրջը³³, ավելին՝ պնդում, թե «սորոսականների» իրականացրած թավշյա հեղափոխությունը «արտահանվում է» Ղարաբաղ³⁴:

Ղարաբաղյան հարցի և բանակի հանդեպ հանրային զգայունությունները օգտագործելով՝ այս խմբերը կորոնավիրուսի տարածումը շարունակաբար օգտագործում էին հանրային տրամադրությունները լարելու համար: Այս տեսանկյունից չշրջանցվեց նաև պարբերաբար շահարկվող «սորոսականության» դիսկուրսը. համաձայն այս տեսության՝ Ղարաբաղում ընտրությունների հետաձգման ջատագով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների իրական նպատակադրությունը ոչ համավարակային պայմաններում ընտրությունների իրականացումն էր, որը թույլ կտար նրանց վիճարկել ընտրությունների արդյունքները և այդ կերպ 2018-ի հեղափոխական պայթյալի պրակտիկաները տեղափոխել

32. Analitik.am. (2020, մարտ 24). Միրելի արցախցիներ, հրապարակում են օլիգարխ Տորոջ Սորոսի վարձկան, արցախցի Գեղամ Բաղդասարյանի գրանտները. Մայլան. վերցվել է՝ <https://analitik.am/news/view/604846>

33. Analitik.am.(2020, մարտ 23). Սորոսականները բացահայտ համախմբվել են Արցախի նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանի շուրջը. Նարեկ Մայլան. վերցվել է՝ <https://analitik.am/news/view/604693>

34. Politik.am. (2020, մարտ 27). Կանխել կորոնավիրուսի և հեղափոխության ներթափանցումն Արցախ. վերցվել է՝ <https://bit.ly/3jMQkCT>

Ղարաբաղ: Այս դավադրական շղթան պատվում է մի քանի դրույթների շուրջ. Ղարաբաղում ընտրություններ անցկացնելով՝ կորոնավիրուսի դեպքերը շատացնելու, Ղարաբաղում հեղափոխական տրամադրություններ ստեղծելու, «սորոսականների» ակտիվանալու, տեղական իշխանությունների՝ Ղարաբաղում կամակատար դեկավար ունենալու նպատակադրությունների շուրջ. «Վարդապետը ինդիր է դրել հեղափոխությունն արտահանել Արցախ: Նրա այդ ցանկությունն այնքան մեծ է, որ նա, անգամ Հայաստանից կորոնավիրուսի արտահանման վրա ուշադրություն չդարձնելով, ցանկանում է հեղափոխությունն արտահանել Արցախ: Արդեն իսկ տարատեսակ հեղափոխական ինստրուկտորներ արսենխառատյանները, սորոսականները և դրսի ուժերի մյուս գործակալները վիտտում են Արցախում՝ ցնցումներ նախապատրաստելու համար: ...Պետք է ամեն ինչ անել կորոնավիրուսի ու հեղափոխության արտահանումը Հայաստանից Արցախ թույլ չտալու համար: Սա պետք է լինի բոլոր ազգային ուժերի ինդիրը»³⁵:

Համավարակի պայմաններում Ղարաբաղում ընտրությունների անցկացնելուն դեմ ելույթներով հանդես եկավ քաղաքացիական հասարակությունը՝ մտահոգված քաղաքական նպատակահարմարությանը ստորադասվող հանրային առողջությամբ, մինչդեռ դավադրական ուժերը «անհանգստացած» էին ընտրությունների միջոցով Ղարաբաղում հեղափոխական տրամադրություններ ստեղծելուց:

Դավադրական ուժերը Հայաստանում կորոնավիրուսի դեմ պայքարի քննարկման լեզուն նույնացնում էին պատերազմական լեզվի հետ՝ վիրուսի տարածումը բնութագրելով իբրև կապիտուլյացիա, իսկ վիրուսի դեմ դիմակ կրելով պաշտպանվածությունը՝ որպես պայքարի պատրանք՝ կապիտուլյացիայի հետևանքով պատասխանատվությունից խուսափելու համար³⁶: Համավարակի ու պատերազմի համեմատական դիսկուրսը առաջ տարան նաև կառավարող ուժի ներկայացուցիչները՝ կորոնավիրուսը սահմանելով որպես անտեսանելի թշնամի, վիրուսի դեմ պայքարը՝ պայ-

35. Նույն տեղում

36. Ադելվադ. (2020, սեպտեմբեր 20). Ալին-Փաշինյան զրույցի տապալման և ապագա սարքոտամների փորձերի մասին. [ֆեյսբուքյան ուղիղ եթեր]. Facebook. վերցվել է՝ <https://www.facebook.com/watch/?v=960834371093387>

քար անտեսանելի թշնամու դեմ: Համավարակի մասին խոսելիս լեզվի ընտրության անզգուշության հարցը միայն տեղական հանրային-քաղաքական դիսկուրսում չէ, որ նկատելի էր, այն ուներ միջազգային բնույթ: Միջազգային մակարդակում տիրապետող էին համաշխարհային առողջապահական, սոցիալական և տնտեսական ճգնաժամի ռազմականացված ձևակերպումները, ինչը մեկնաբանվում էր իբրև պատերազմ «ընդդեմ անտեսանելի, անորսալի թշնամու»³⁷:

Այս համատեքստում կարևոր է նաև անդրադառնալ Հայաստանի երկրորդ նախագահի քննադատությանը հայկական երեք հեռուստաալիքներին տված հարցազրույցում: Նա մեղադրում է գործող իշխանություններին կառավարման հմտություններ չունենալու և սեփական անհաջողությունների մեջ «սիրելի» ժողովրդին մեղադրելու հարցերում և կորոնավիրուսի դեմ պայքարի տապալման համեմատությունը կառուցում՝ կրկին կիրառելով ռազմականացված բառապաշար. «Վաղը պատերազմ լինի, հանկարծ, խնդրահարույց բաներ լինեն յուրաքանչյուր ոլորտում, պարզ է՝ ով է մեղավոր. մեր սիրած ժողովուրդն է մեղավոր, որովհետև անկազմակերպ է»³⁸:

Համավարակի ռազմականացված հռետորաբանությունն արագորեն վերարտադրվեց նաև քաղաքացիական հասարակության որոշ խմբերի շրջանում:

1.2. Ապատեղեկատվության դեմ պայքարի գլոբալ և տեղական փորձերը

Կորոնավիրուսի՝ ԱՅԿ-ի կողմից համաշխարհային պանդեմիա որակվելուց շատ չանցած՝ բազմաթիվ երկրներում կառավարությունները սահմանեցին արտակարգ դրություն, որի շրջանակում

37. infocom.am. (2020, հունիս 12). Համավարակի[ց] հետ[ո]. Արփի Մանուսյան. վերցվել է՝ https://infocom.am/Article/29515#_ftn6

38. 5TV Channel. (հուլիս 29, 2020). ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հարցազրույցը հայկական երեք հեռուստաընկերություններին. վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=_dhzvuoohXU

սահմանափակվեցին մարդու հիմնարար իրավունքներն ու սահմանադրական երաշխիքները:

Համաշխարհային տարածում ունեցող, մահվան ելքով վարակի մասին հանրությանը ճշգրիտ տեղեկատվության տրամադրումն, իհարկե, կարևոր է ապատեղեկատվության դեմ պայքարի տեսանկյունից: Սակայն «ապատեղեկատվության դեմ պայքարի» շղարշի ներքո հետադիմական ուժերը, աջ պոպուլիստական-հետադիմական կառավարությունները հնարավորություն ստացան իրենց հակաժողովրդավարական, պահպանողական, հակաիրավական քաղաքականություններն առաջ մղելու համար: Խոսքի ազատությունը և մամուլի ազատությունը սահմանափակող դրույթներ սահմանվեցին աշխարհի բոլոր մայրցամաքներում³⁹:

Այսպիսով՝ մի կողմից աջ ծայրահեղական խմբերը, տարբեր դավադրության տեսություններ մշակողները, հակաիրավական և ազատությունների սահմանափակման հովանոցի ներքո հանդես եկող անհատները և խմբերը տարածում էին դավադրության տեսություններից սևված և դրանցով համեմված ապատեղեկատվություն, մյուս կողմից՝ աջ պոպուլիստական-հետադիմական կառավարությունները, իշխանության ներկայացուցիչները պայքարում էին այդ ապատեղեկատվության դեմ՝ սահմանափակելով մարդու հիմնարար իրավունքների կարևորագույն դրույթները՝ ընդունելով օրենքներ և որոշումներ, որոնք բացասական ազդեցություն ունեն ընդհանուր ժողովրդավարության և մարդու իրավունքների իրադրության վրա:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ Հունգարիայի խորհրդարանն ընդունեց անժամկետ նոր օրենք, որով «կորոնավիրուսի համավարակի ժամանակ ապատեղեկատվության տարածումը» կարող էր հանգեցնել լրագրողների ազատագրկման՝ մինչև 5 տարի ժամկետով: Հունգարիայում աշխատող լրագրողների պնդմամբ՝ այս սահմանափակումն էականորեն ազդել է իրենց գործունեության վրա. լրագրողներին հաճախ չի տրամադրվել տեղեկատվություն, օրենքն օգտագործվել է անկախ լրագրողներին ճնշելու համար, քանի որ գործադիր մարմնին՝ ի դեմս վարչապետ Վիկտոր Օրբանի, իրավասություն է տրվել որոշելու՝ արդյոք հրա-

39. Reporters Without Borders. (2020, June 12). *Covid-19 emergency laws spell disaster for press freedom*. Վերցվել է՝ <https://bit.ly/3xg3jHP>

պարակումը ճիշտ է, թե կեղծ, ինչպես նաև որոշում կայացնելու՝ իրենց գնահատմամբ «կեղծ» տեղեկատվության «ոչնչացման» ձևերի առնչությամբ⁴⁰: Սա էլ, իր հերթին, հանգեցրել է ինքնագրաքննության՝ լրագրողներին դնելով այնպիսի դրության մեջ, որ վերջիններս նույնիսկ չեն կարող քննադատել կառավարության արձագանքը համավարակին: Նման օրինագծի ընդունումն առաջացրեց ընդվզում հունգարացի լրագրողների շրջանում, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները, ԵՄ 16 պետություն հանդես եկան հայտարարությամբ՝ դատապարտելով այս նախագիծը: Միաժամանակ Վիկտոր Օրբանը շրջանառեց դավադիր ուժերի մասին իր գնահատականները՝ հայտարարելով, թե այս օրինագծի դեմ պայքարի հետևում դարձյալ կանգնած է Ջորջ Սորոսը, որի դեմ ինքը ակտիվորեն մարտնչում է⁴¹:

Նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ խոսքի ազատությունը սահմանափակվեց նաև Ռումինիայում, ինչը լայն հանրությանը ներկայացվեց «կեղծ լուրերի» դեմ պայքարի համատեքստում: Այդ գործընթացը վստահվեց Վարչարարության և կապի կանոնակարգման ազգային մարմնին (ANCOM), որի հետևանքով հանվում էին ոչ միայն այն հոդվածներն ու կյութերը, որոնք պարունակում էին «կեղծ լուրեր», այլև փակվում էին այդ լուրերը տարածող կայքերն անգամ⁴²: Ինչպես Հունգարիայի պարագայում, այս կարգավորումները Ռումինիայում բերեցին մեծածավալ ինքնագրաքննության լրագրողների շրջանում:

Լրատվամիջոցների և լրագրողների դեմ սահմանափակումների մասին օրենսդրական և իրավական ակտեր, կառավարությունների որոշումներ ընդունվեցին նաև Չեխիայում, Բոսնիա և Հերցեգովինայում և Սլովենիայում⁴³: 2020 թվականի մարտի 25-ին

40. Applebaum, A. (2020). *Twilight of democracy: The Seductive Lure of Authoritarianism*. (p.335). Random House Large Print. Տե՛ս նաև՝ Walker, S., Rankin, J. (2020, March 30). *Hungary passes law that will let Orbán rule by decree*. The Guardian. Վերցվել է՝ <http://bit.ly/theguardian-hungary-low>

41. Walker, S. (2020, April 3). *Hungarian journalists fear coronavirus law may be used to jail them*. The Guardian. Վերցվել է՝ <http://bit.ly/theguardian-hungarian-journalists>

42. presidency.ro. (2020, March 16). *Decret semnat de Președintele României, domnul Klaus Iohannis, privind instituirea stării de urgență pe teritoriul României*. Վերցվել է՝ <http://bit.ly/presidency-ro>

43. Europa Press. (2020, April 4). *Libertad Digital, El Mundo, ABC, Vozpópuli, La Razón y Ok Diario no preguntarán al Gobierno por "censura"*. Վերցվել է՝ <http://bit.ly/europa-press>

Բելառուսում ձերբակալվեց *Եժեղնեվկի*⁴⁴ թերթի խմբագիր Սերգեյ Սատցուկը, քանի որ նա քննադատել էր Բելառուսի նախագահ Ա. Լուկաշենկոյի՝ Քովիդ-19 համավարակի դեմ պայքարի համատեքստում (չ)ձեռնարկած քայլերն ու միջոցառումները: Ձերբակալությունից 10 օր անց Սատցուկն ազատ է արձակվել իշխանություններին պարբերաբար ներկայանալու պայմանով: Սատցուկը մեղադրվում էր «կաշառք ստանալու» մեջ, որը նախատեսում է մինչև 10 տարի ազատազրկում⁴⁵: Սատցուկի ձերբակալությունը, դժբախտաբար, եզակի դեպք չէր: Աշխարհի տարբեր երկրներում⁴⁶ լրագրողներն ու լրատվական գործակալությունները, որոնք լուսաբանում էին Քովիդ-19 համավարակը, ենթարկվեցին հետապնդումների, ձերբակալությունների, խոսքի ազատությունը համավարակի առնչությամբ հետընթաց ապրեց:

Նմանօրինակ օրենսդրական նախաձեռնությունների, լրագրողների ձերբակալությունների, խոսքի ազատության սահմանափակման առնչությամբ մամուլի ազատությամբ մտահոգված միջազգային լրագրողական մի շարք կազմակերպություններ հանդես եկան տարբեր հայտարարություններով⁴⁷: Նրանք միասնական բաց նամակ հղեցին Եվրոպական հանձնաժողովի, Եվրախորհրդարանի և Եվրոպական խորհրդի ղեկավարներին այն մասին, որ կառավարությունները, օգտվելով կորոնավիրուսի համավարակից, պատժում են անկախ և քննադատ լրատվամիջոցներին, սահմանափակում են կառավարության որոշումներին և գործողություններին դրանց միջամտությունը՝ այդ ամենը ներկայացնելով իբրև ապատեղեկատվության, թերի տեղեկատվության և դավադրության տեսությունների դեմ պայքարի արդյունավետ գործիք:

44. «Եժեղնեվկի» օնլայն թերթը Բելառուսում հայտնի է որպես առողջապահության ոլորտում հետաքննություն իրականացնող հարթակ, տես <https://ej.by/>

45. Reporters Without Borders. (2020, March 31). *Belarusian journalist arrested for criticizing president's Covid-19 approach*. Վերցվել է՝ <http://bit.ly/rwb-belarus>

46. Reporters Without Borders. (2020). Վերցվել է՝ <https://bit.ly/3hiGFZ0>

47. Հոդված 19 (ARTICLE 19), Եվրոպական լրագրողների ասոցիացիա (Association of European Journalists (AEJ)), Մամուլի ու մեդիայի ազատության եվրոպական կենտրոն (European Centre for Press and Media Freedom (ECPMF)), Լրագրողների եվրոպական ֆեդերացիա (European Federation of Journalists (EFJ)), Ազատ մամուլ առանց սահմանափակումների (Free Press Unlimited (FPU)), Գրաքննության գործակից (Index on Censorship), Լրագրողների միջազգային ֆեդերացիա (International Federation of Journalists (IFJ)), Մամուլի միջազգային ինստիտուտ (International Press Institute (IPI)), Լրագրողներ առանց սահմանների (Reporters Without Borders (RSF)):

Համավարակի պայմաններում անվտանգության միջոցառումների ձեռնարկումն ու իրականացումը, իրավամբ, կարևոր են հանրային առողջության պահպանման համար, սակայն, մյուս կողմից, մի շարք երկրների կառավարություններ օգտագործում են այս «առիթը»՝ ամրապնդելու իրենց երկրներում ավտորիտար իշխանությունը՝ ճնշելով ժողովրդավարական ինստիտուտները և ազատ մամուլը⁴⁸:

Նման որոշումներն իբրև թե հիմնավորվում էին նրանով, որ 2020 թվականի փետրվարին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարություն էր տարածել այն մասին, որ Նոր տեսակի կորոնավիրուսի համավարակն ուղեկցվում է «ինֆոարակով»։ շատ են հանրային առողջությանը վնասող մանիպուլյացիաները, ապատեղեկատվությունը և կեղծ տեղեկատվությունը համավարակի շուրջ⁴⁹:

Կորոնավիրուսով պայմանավորված՝ արտակարգ դրություն հայտարարվեց նաև Հայաստանում: 2020 թվականի մարտի 16-ին ՀՀ Կառավարությունը հաստատեց հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին 298 - Ն որոշումը⁵⁰: ՀՀ-ում արտակարգ դրության հաստատման մասին ընդունված որոշման յոթերորդ գլխում, ի թիվս այլ սահմանափակումների, արգելքներ էին սահմանվում զանգվածային լրատվության միջոցներով առանձին հրապարակումների և հաղորդումների վրա: Մասնավորապես ՀՀ-ում, ինչպես նաև հանրապետության տարածքներից դուրս վարակման դեպքերի, անձանց առողջական վիճակի, վարակի աղբյուրների, առկա կամ հնարավոր վարակակիր անձանց հետ շփված այլ անձանց շրջանակի, թեստավորում անցնող անձանց և մեկուսացվածների քանակի, ինչպես նաև խուճապային իրադրությունն ստեղծելու վտանգ պարունակող տեղեկությունների վերա-

48. European Federation of Journalists. (2020, March 31). *COVID-19: Council of Europe must ensure press freedom is protected*. Վերցվել է՝ <http://bit.ly/EFJ-press-freedom>

49. World Health Organization. (2020, February 2). *Novel Coronavirus (2019-nCoV) Situation Report - 13*. Վերցվել է՝ <http://bit.ly/WHO-Report>

50. e-gov.am. (2020, մարտ 16). *2020 թվականի մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության ժամանակ կիրառվող միջոցառումները, իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները, արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները*. վերցվել է՝ <http://bit.ly/e-gov-am>

բերյալ հրապարակումների տարածումը կատարվում է միայն պարետատանը հղում կատարելով⁵¹: Ավելին՝ յոթերորդ գլխում նաև ամրագրված էր, որ ՉԼՄ-ի կողմից հրապարակված տեղեկատվությունը գրեթե պետք է վերարտադրի պաշտոնապես տրամադրված տեղեկատվությունը և չպետք է հակասի դրան: ՉԼՄ-ում, սոցիալական մեդիայում արտակարգ դրության որոշման մեջ սահմանված դրույթներին հակասող տեղեկատվությունը պետք է անհապաղ վերացվեր այն անձանց կողմից, ովքեր հրապարակել էին դա:

Սակայն այդպես էլ չհիմնավորվեց, թե նման կերպ տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումներն ինչ նպատակի էին ծառայում, կամ ինչ էին նշանակում որոշման մեջ ներառված «խուճապ» և «խուճապային տրամադրություն» հասկացությունները, որոնք էին «խուճապի» որոշման չափանիշները, ինչպես նաև՝ ովքեր էին այն սուբյեկտները, որ որոշելու էին, թե ինչն է առաջացնում «խուճապ», ինչը՝ ոչ, արդյոք «խուճապ» հասկացությունը տարածվում է միայն արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների, այն է՝ կորոնավիրուսի վերաբերյալ տեղեկությունների⁵² վրա, թե՞ ենթադրում է լրացուցիչ այլ հանգամանքներ (օրինակ՝ ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստան-Ադրբեջան, Ղարաբաղ-Ադրբեջան շփման գծի երկայնքով հնարավոր լարվածությունների առնչությամբ) և այլն:

Այս և այլ հարցադրումներին պատասխան ստանալու ակնկալիքով մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչներ, խմբագիրներ գրավոր նամակ էին հղել պարետատուն⁵²: Լրագրողական մի շարք կազմակերպություններ հանդես եկան հայտարարությամբ, որով արձանագրեցին, որ արտակարգ դրության որոշման մեջ ընդունված դրույթները հակասում են ողջամտության սկզբունքներին և չեն նպաստում համաճարակի պայմաններում հանրային շահերի իրացմանը⁵³: Այս առնչությամբ իր մտահոգությունն էր հայտնել նաև ԵԱՀԿ ՉԼՄ-ի ազատության հարցերով ներկայացուցիչ Հարլեմ Դեգիրը. նա կարևորել էր համավարակի շրջանակում ապատեղեկատվության դեմ պայքարի գործում պետության ջան-

51. Նույն տեղում

52. aravot.am. (2020, մարտ 18). *ՀՀ պարետ Տիգրան Ավիլյանին դիմում՝ պաշտոնական պարզաբանումներ ստանալու համար*. վերցվել է՝ <https://bit.ly/2VgD8mp>

53. khosq.am. (2020, մարտ 20). *Հայտարարություն*. վերցվել է՝ <https://bit.ly/2SrB0H1>

քերը, սակայն, մյուս կողմից, շեշտել էր, որ ապատեղեկատվության դեմ պայքարում կարևոր է հենց ՉԼՄ-ի դերը, իսկ միայն պետության կողմից տեղեկատվության տրամադրումը ՉԼՄ-ի գործունեությունը սահմանափակող միջոց է⁵⁴:

2020 թվականի մարտի 24-ին ՀՀ Կառավարությունը վերափոխեց մարտի 16-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» իր որոշման՝ լրատվամիջոցների գործունեությանը վերաբերող դրույթները: Այս որոշմամբ կառավարությունը սահմանեց, որ եթե կորոնավիրուսի մասին այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները չեն համապատասխանում պաշտոնականին կամ ճշգրիտ չեն, ապա դրանք ոչ թե պետք է հանվեն տուգանքի սպառնալիքով, այլ ՉԼՄ-ն պետք է հրապարակի դրանց հերքումը 2 ժամվա ընթացքում և ապահովի տարածումը սոցիալական ցանցերով: Իսկ օտարերկրյա լրատվամիջոցների կողմից կորոնավիրուսի համավարակի վերաբերյալ հրապարակված տեղեկատվության ամբողջական կամ մասնակի արտատպման դեպքում ՉԼՄ-ն պետք է Նշի սկզբնաղբյուրը Նյութի վերնագրում: Բացի այդ՝ կառավարության որոշման դրույթներից հանվեց «խուճապ առաջացնող տեղեկություններ» ձևակերպումը⁵⁵:

Համավարակի ընթացքում կոնտակտավոր անձանց ավելի օպերատիվ գտնելու և նրանց ու վարակակիրների 14-օրյա կարանտինում գտնվելը վերահսկելու համար արդարադատության նախարարությունը 2020 թվականի մարտի 31-ին ԱԺ-ի քննարկմանը ներկայացրեց «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին առաջարկների փաթեթը, որով վերահսկվելու էին քաղաքացիների հեռախոսազանգերը, հաղորդագրությունները, տեղորոշվելու էր նրանց գտնվելու վայրը արտակարգ դրության ընթացքում: Արձանագրվելու էին նաև հեռախոսազանգերի հետ ուղիղ կամ միջնորդավորված կապ ունեցող բոլոր հեռախոսահամարները, ինչպես նաև հեռախոսային

54. Թարխանյան, Լ. (2020, մարտ 25). ԵԱՀԿ. *Կորոնավիրուսի դեմ պայքարը չպետք է խոչընդոտի ՉԼՄ-ի աշխատանքը Հայաստանում*. վերցվել է՝ <https://bit.ly/3Av6sFD>

55. Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե. (2020). *Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ի իրավունքների խախտումների մասին Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի 2020 թ. 1-ին եռամսյակի զեկույց*. Հեռք. վերցվել է՝ <http://bit.ly/hetq-cpfe-1st-quarter-report>

խոսակցության ամսաթիվը՝ սկիզբը և ավարտը պարզելու համար, իսկ ստացված տեղեկատվությունը տրամադրվում էր կոնկրետ կառույցների՝ արտակարգ դրությունից հետո տվյալները վերացնելու պայմանով. «Որևէ նոր տվյալ քաղաքացիների մասին չի մշակվում և չի հավաքվում: Բջջային օպերատորների մոտ արդեն գոյություն ունեցող տվյալները հավաքվում են մեկ միասնական բազայում՝ համաճարակի դեմ պայքարելու համար: Համաճարակից հետո այդ տվյալները ոչնչացվելու են»⁵⁶:

Երրդվող մեթոդի արդյունավետությունը հիմնավորելու համար նախարարը բերում էր Չինաստանի, Հարավային Կորեայի, Իսրայելի փորձը: Օրենքում փոփոխություններ կատարելու մասին որոշումը ԱԺ-ում ընդունվեց երկրորդ ընթերցմամբ՝ բացառապես «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների քվեարկությամբ, քանի որ ընդդիմադիր ուժերը հրաժարվել էին նիստերին ներկայանալուց:

Օրենքում փոփոխություններ կատարելու մասին որոշումն ինքնին խնդրական էր, ինչը ի հայտ բերեց բողոքի ու անհամաձայնության տարբեր քննարկումներ խորհրդարանական ընդդիմության, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շրջանում: Ընդդիմադիր ուժերը դեմ էին նաև նախագծի փոփոխված տարբերակին, թեպետ առաջարկություններ չէին ներկայացրել: «Լուսավոր Հայաստանի» ղեկավար Էդմոն Մարոքյանը պնդում էր, որ սա ուշացած նախաձեռնություն է. «Մենք առաջարկներ չենք ներկայացրել, որովհետև գտնում ենք, որ նախագիծն իր էությամբ սխալ է, որևէ օգուտ չի տալու պանդեմիայի դեմ պայքարին և ընդհակառակը՝ վնաս է հասցնելու մեր երկրի ժողովրդավարությանը և ազատություններին»⁵⁷, իսկ «Բարգավաճ Հայաստանի» ներկայացուցիչներն էլ նշում էին, որ նախագիծը սահմանափակում է անձի հիմնարար իրավունքները: Նաիրա Չոհրաբյանը, այդ ժամանակ լինելով ՀՀ ԱԺ Սարգսյան իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, քննարկվող

56. parliamentmonitoring.am. (2020, մարտ 31). ԱԺ գիշերային նիստ՝ առանց ընդդիմության. վերցվել է՝ <http://www.parliamentmonitoring.am/am/monitoring/466>

57. Ինֆոքոմ. (2020, մարտ 31). Քաղաքացիներին հեռախոսահամարի միջոցով տեղորոշելու նախագիծը որևէ օգուտ չի տալու պանդեմիայի դեմ պայքարին, վնասելու է երկրի ժողովրդավարությանը. «Լուսավոր Հայաստանը» դեմ կքվեարկի. Էդմոն Մարոքյան. |tert.am|. վերցվել է՝ <http://bit.ly/2P65Hjk>

Նախագիծը սահմանեց որպես «*հպարտ քաղաքացիներին տեղորոշելու անհմաստ նախագիծ*», սակայն նախագծի հիմնարար խնդիրների շարքում անգամ չկշեց քաղաքացիների տեղորոշման մասին որոշումն իբրև մարդու իրավունքների կոպտագույն խախտում: Իրենց խմբակցության կողմից օրինագծին դեմ քվեարկելու պատճառները ավելի շուտ ներքին քաղաքական անհամաձայնություններն էին խորհրդարանական մեծամասնության դիրքորոշմանը. «*Այս պահին ԱԺ-ում, առանց ընդդիմադիր երկու խմբակցություններին իրազեկելու, սկսվել է արտահերթ նիստ, որի օրակարգում այսօր առավոտյան տապալված` ՀՀ քաղաքացիներին տեղորոշելու անընդունելի նախագիծն է: Նիստը ընդմիջվել է քվորումի բացակայության պատճառով, և միայն նիստի մեկնարկին է ԱԺ նախագահը իրազեկել, որ գանք նիստի: Բնականաբար, «Իմ քայլի» ուժերով նիստը կկայանա, հպարտ քաղաքացիներին տեղորոշելու անհմաստ նախագիծը կընդունվի, սակայն սա վատ, շատ վատ նախադեպ է: [...] Սա քաղաքական բարեվարքության և գործընկերային համակեցության նորմերի կոպտագույն խախտում է: [...] Ես տեղեկացնում եմ, որ «Բարգավաճ Հայաստանը» չի գնալու և չի մասնակցելու այս նիստին երկու պատճառով. առաջին` նիստի մասին իմացել ենք պոստ-ֆակտում, և երկրորդ` մեզ տեղորոշելու նախագիծը այնքան կապ ունի կորոնավիրուսի կանխարգելման հետ, ինչքան ես` բրիտանական արքունիքի հետ»⁵⁸:*

ԱԺ անկախ պատգամավոր Արման Բաբաջանյանը, ով առաջին ընթերցման ժամանակ դեմ էր արտահայտվել նախագծին և ասել, թե դրանում անձի հիմնարար իրավունքների խախտում է տեսնում, փոխել էր դիրքորոշումը՝ մեկնաբանելով «*համավարակի ծանր պայմաններում իշխանությանը ինչ-որ բանով աջակցելու ու մարդկանց առողջությունը փրկելու պատրաստակամությամբ*»⁵⁹:

Կորոնավիրուսով վարակակիրների և նրանց շրջապատի հեռախոսազանգերի ամրագրումն ու տեղորոշման համակարգի ներմուծումը որպես մարդու իրավունքների խախտման փորձ մեկ-

58. Չոհրաբյան, Ն. (2020, մարտ 30). *Այս պահին ԱԺ-ում, առանց ընդդիմադիր երկու խմբակցություններին իրազեկելու, սկսվել է արտահերթ նիստ, որի օրակարգում այսօր առավոտյան տապալված` ՀՀ քաղաքացիներին տեղորոշելու անընդունելի նախագիծն է*: [Ֆեյսբուքյան գրառում]. վերցվել է՝ <https://bit.ly/3yoDK7F>

59. [parliamentmonitoring.am](http://www.parliamentmonitoring.am). (2020, մարտ 31). *ԱԺ գիշերային նիստ՝ առանց ընդդիմության*. վերցվել է՝ <http://www.parliamentmonitoring.am/am/monitoring/466>

Նաբանվեցին և առաջացրին քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչների բողոքը՝ ձևակերպելով որպես հեղափոխական իշխանության հանդեպ վստահության նվազման ու հիասթափության հերթական առիթ: Այդպես էլ հանրությանը տեղեկություն չտրամադրվեց այն մասին, թե որտեղ են հավաքագրվում և պահվում քաղաքացիների մասին տվյալները, ինչպես են դրանք կիրառվելու, և, ի վերջո, ինչ արդյունավետություն ունեցավ այդ մեթոդն արդեն մեկ տարուց ավելի տևող համավարակի ծավալները նվազեցնելու գործում:

Որքան էլ կառավարությունը՝ ի դեմս պարետատան, ձեռնարկեց միջոցառումներ՝ պայքարելու ապատեղեկատվության, կեղծ տեղեկատվության և մանիպուլյատիվ տեղեկատվության դեմ, կամ նման միջոցառումներ իրականացնելու իմիտացիա ստեղծեց, այնուամենայնիվ, համավարակի շրջանակում այդպես էլ հնարավոր չեղավ արդյունավետ պայքարել հանրային առողջապահությանը վնասող այս երևույթների դեմ:

Բաժին 2

Հակագենդերային արշավները
կորոնավիրուսի համատեքստում

Հայաստանում, ինչպես աշխարհի շատ երկրներում, համավարակի առնչությամբ դավադրության տեսությունների պակաս էր նկատվում: Դավադրության տեսություններ տարածող խմբերը և անհատները, կախված երկրի սոցիալ-քաղաքական համատեքստից, ունեն իրենց փոքր ու մեծ քաղաքական, տնտեսական և այլ շահերն ու օրակարգերը: Ավելին, ինչպես հակազենդերային արշավների պարագայում, այնպես էլ կորոնավիրուսի համավարակի ընթացքում ի հայտ եկած մանիպուլյացիոն հռետորաբանությունը, ապատեղեկատվությունը, նեղ քաղաքական և քվազի քաղաքական շահերով ուղղորդված կեղծ տեղեկատվությունը հիմնականում զուգորդվում էին Հայաստանին ներհատուկ՝ ներքին քաղաքական և հակազենդերային օրակարգերով:

Կորոնավիրուսի համավարակի շրջանակում ապատեղեկատվության, կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվության տարածումն էլ ավելի էր ընդլայնվում, երբ հանրային քննարկումների դաշտում էր հայտնվում որևէ նշանակալի քաղաքական իրադարձություն կամ մարդու իրավունքներին կամ զենդերային հարցերին առնչվող զգայուն հարց: Մասնավորապես կարող ենք առանձնացնել մի շարք դեպքեր, որոնց շրջանակներում կորոնավիրուսի և հակազենդերային ու հակաիրավապաշտպան հռետորաբանությունները խաչվել են:

2.1. Մարդու իրավունքների և հանրային առողջության շահարկումները

Կորոնավիրուսի առաջին դեպքի հաստատումից հետո ՀՀ Կառավարությունը որոշեց կոնտակտավոր ու արտերկրից ժամանած անձանց մեկուսացնել, և որպես կարանտինային առաջին հաստատություն ընտրվեց Ծաղկաձորի «Գոլդեն Փելես» հյուրանոցը, որից հետո կառավարությունն այս հարցի շրջանակում սկսեց համագործակցել այլ գործարարների ու մասնավոր կառույցների հետ: Մի կողմից՝ սա «պարտադրված» մեկուսացում էր, քանի որ մարդիկ կոնտակտավոր լինելու պարագայում հևարավորություն չունեին հրաժարվելու պետության կողմից առաջարկվող մեկուսացման պայմաններից և չէին կարող պարզապես ինքնամեկուսանալ իրենց տներում: Մյուս կողմից, սակայն, վարակի տարածման սկզբնական այդ շրջանում ձեռնարկվող կանխարգելման միջոցառումներն իրենց հետևում չունեին արդյունավետության մասին բավարար փաստական տվյալներ:

Հակաժողովրդավար, հակաիրավապաշտպան խմբերը և ուժերը սկսեցին հարցի առնչությամբ հասցեական դիմումներ, բաց նամակներ հղել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին՝ բարձրաձայնելով մարդու իրավունքների ոտնահարման հարցերը: Մարդու իրավունքներով իբրև թե մտահոգ հակաժողովրդավար այս ուժերը, որոնց գործունեությունը մշտապես ուղղված է եղել իրավունքի գաղափարի նսեմացմանը, սկսեցին շահարկել այն՝ հանրային հեղինակություն ձեռք բերելու համար: Միաժամանակ նույն խմբերի աչքից վրիպեցին կորոնավիրուսի համավարակի համատեքստում հանրային որոշ շերտերի և իշխանությունների՝ վարակված մարդկանց պախարակելու ու պիտակավորելու խոսուն դեպքերը: Խոսքը մասնավորապես Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում կորոնավիրուսով վարակված քաղաքացու տան պատերին «վարակակիրներ», «կորոնավիրուս», «վիրուսոտներ» հարևանների արած գրությունների մասին է⁶⁰: Սա բազմաթիվ օրինակներից ընդամենը մեկն էր, սակայն պիտակավորման և խտրականության դեպքերը հատկապես համավարակի

60. aravot.am. (2020, մայիս 14). *Մարտունի համայնքում կորոնավիրուսով վարակված քաղաքացու տան պատերին գրել են «վարակակիրներ», «կորոնավիրուս», «վիրուսոտներ»*. վերցվել է՝ <https://www.aravot.am/2020/05/14/1111480/>

սկզբնական շրջանում բազմաթիվ էին, ինչի հետևանքով մարդիկ իրենց շրջապատից թաքցնում էին վարակված լինելու փաստը ու շարունակում չմեկուսացած կյանք վարել:

Նույն խմբերը անտեսեցին նաև վարչապետի՝ համավարակի պայթարի միջոցառումների շրջանակներում դիմակ չդնող քաղաքացիների նկարների հրապարակման անընդունելի պրակտիկան: Փաշինյանը դա ներկայացնում էր իբրև հանրային պարսավանքի «արդյունավետ գործիք», իսկ պատասխանատվությունը դնում գերազանցապես մարդկանց անհատական գիտակցության վրա:

Կորոնավիրուսի տարածումն ուղեկցվեց նաև մարդկանց աշխատանքային իրավունքների ոտնահարումներով: Այս համատեքստում աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարար Չարուհի Բաթոյանը ֆեյսբուքյան իր էջում հայտարարություն տարածեց այն մասին, որ նման դեպքերում աշխատողները կարող են դիմել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ⁶¹: Սա առիթ դարձավ, որ կազմակերպությունը հայտնի հակազենտերային արշավների թիրախում, իսկ բովանդակային քննադատության առանցքից դուրս մնաց աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ իրավունքների ոտնահարումներին ինստիտուցիոնալ լուծում տալու անկարողությունը:

Վերջիններիս աչքից չվրիպեց և մարդկանց՝ առողջության վիճակը շահարկելու հերթական թեման դարձավ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը» «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնին» միացնելու որոշումը: Որոշումը կայացվել էր 2020 թվականի փետրվարին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց ընդհանուր առողջապահական համակարգի մեջ ներառելու ու չխտրականացնելու նպատակադրությամբ՝ «ՁԻԱՀ-ի դեմ պայքարը պետք է ինտեգրվի ընդհանուր առողջապահական համակարգի մեջ, և այդ միաձուլումը կատարվում է դրա շրջանակներում: Որևէ ֆունկցիայի կրճատում բժշկական այդ երկու կենտրոնների շրջանակներում չի լինելու»⁶², և հայտնվեց դավա-

61. hcav.am. (2020, մարտ 20) *Եթե, արտակարգ դրությամբ պայմանավորված, խախտվել են Ձեր աշխատանքային իրավունքները, դիմե՛ք ՀՔԱ Վանաձորի գրասենյակ*. վերցվել է՝ <http://bit.ly/hqav-state-of-emergency>

62. azatutyun.am. (2020, փետրվար 15). «Մենք մտավաճառների պես բաց դեմքով միտինգ անել չենք կարող»։ ՄԻԱՎ-ով ապրողները դժգոհում են կառավարության որոշումից. վերցվել է՝ <https://www.azatutyun.am/a/30435723.html>

դրության տեսություններն առաջ մղող ուժերի օրակարգում անմիջապես համավարակի ընթացքում՝ որոշումը ներկայացնելով իբրև ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող մարդկանց կյանքերի հետ «խաղալու» փորձ:

Կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարի ողջ ընթացքն ուղեկցվեց դեռևս չստեղծված պատվաստանյութերի դեմ դավադրական առասպելների շրջանառությամբ: Գիտական և առողջապահական համակարգերի ներուժի խնդիրներն ամբողջ աշխարհում երևան եկան համավարակի տարածումից ի վեր: Պատվաստանյութերի՝ սեղմ ժամկետներում ստեղծելու գործընթացն ուղեկցվում էր դավադրության այլևայլ տեսություններով՝ առաջ բերելով հանրային անվստահություն և կասկածամտություն: Արդեն այսօր աշխարհում կիրառվում է պատվաստանյութերի 12 տեսակ⁶³, սակայն դրանց լիարժեք արդյունավետությունը, երկարաժամկետ հետևանքները դեռևս խորությամբ ուսումնասիրված չեն:

Անորոշության այս պայմաններում դավադրության տեսությունները շրջանառող անհատները և խմբերը առիթը բաց չթողեցին հանրային լայն շրջանակներում սրելու պատվաստանյութերի հանդեպ կասկածամտությունը՝ տարածելով կեղծ տեղեկատվություն և ապատեղեկատվություն:

Այսպես՝ դավադրության տեսությունները շեշտադրում են մարդկության գլոբալ վերահսկողության մասին դրույթը, համաձայն որի՝ համաշխարհային էլիտաները առաջ են տանում «գազանի նշան» կոչվող տեխնոլոգիան՝ իբրև թե նպատակ ունենալով հեռավար կերպով նույնականացնելու և վերահսկելու մարդկանց մոլորակի ցանկացած կետում: Այս ամենը կապվում է «Բիլ և Մելինդա Գեյթս» հիմնադրամի հովանու ներքո գործող պատվաստանյութերի համաշխարհային գործակալության՝ Գավիի անվան հետ: Միլիարդատեր Բիլ Գեյթսի անունն առավել սրությամբ հայտնվեց դավադրության տեսությունների առանցքում, երբ կրկին սկսեցին շրջանառել վերջինիս՝ համաշխարհային պանդեմիայի վերաբերյալ կանխատեսումները: Հաշվի առնելով համաշխարհային խիստ սահմանափակումների ռեժիմը, հանրային մեծամասշտաբ միջոցառումների սահմանափակումները և «հին» կյանքին վերադառնալու մարդկանց մեծ ցանկությունը՝ պատվաստվելու ու այդ

63. nytimes.com.(2021, մայիս 25). *Coronavirus Vaccine Tracker*. Վերցվել է՝ <https://www.nytimes.com/interactive/2020/science/coronavirus-vaccine-tracker.html>

սահմանափակումներից ազատվելու համար այլ ելքեր գտնելուն ուղղված քայլերը էլ ավելի սրեցին դավադրության տեսություններ առաջ մղող խմբերի հռետորաբանությունն ու գործունեությունը՝ հանրային քննարկման դաշտ նետելով մի դիսկուրս, թե «Բիլ և Մելինդա Գեյթս» հիմնադրամի կողմից ստեղծվել է «նույնականացման» պատվաստանյութ, որը դաջվածքի տեսքով վերահսկողություն կսահմանի մարդկության նկատմամբ⁶⁴:

Միաժամանակ Հայաստանում պատվաստանյութերի դեմ պայքարն, ըստ էության, վերածվեց կառավարության, մասնավորապես առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանի դեմ պայքարի՝ թիրախավորելով վերջինիս՝ պատվաստումները և մասնավորապես կորոնավիրուսի դեմ պատվաստումը քաջալերող դիրքորոշումը: Այս հարցում իրենց «ներդրումն» ունեցան այն բժիշկները, որոնք, չարաշահելով իրենց մասնագիտական դիրքը, ստորագրելով հանրային առողջությունը և հանրային շահը, կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարի ողջ ընթացքում լծված էին հանրային առանց այդ էլ սակավ վստահություն ունեցող պատվաստանյութերը հարցականի տակ դնելու գործին՝ ակնելով, թե պատվաստանյութերի դերը հանրային առողջության տեսանկյունից գերազնահատված է թե՛ աշխարհում, թե՛ Հայաստանում. *«Ի սկզբանե ասում են, որ հակամարմիններ չեն առաջանում, և հող են նախապատրաստում պատվաստումների համար: Սա ոչ թե դավադրությունների տեսություն է, այլ մասշտաբային շանտոլություն է: Կապիկություն են անում, որ համաճարակը սարսափելի է, դիմակ դնել են տալիս, մարդկանց առանձնացրին հյուրանոցներում, չթողեցին իմունիզացիոն բարիեր ստեղծվի, որպեսզի կարևորեն վակցինայի դերը: Վակցինան կարող է ավելի վտանգավոր լինել, քան էս անտեր համաճարակը: Առողջապահության նախարարությունում շպիոններ են, դիվերսանտ են»⁶⁵:*

Կրկնօրինակելով աշխարհի տարբեր անկյուններում ի հայտ եկած դավադրության դիսկուրսները՝ Հայաստանում ևս դիմակ դնելու պարտադրանքը այս խմբերը սահմանեցին իբրև բիզնես

64. Para TV. (2020, ապրիլ 15). Կորոնավիրուսի դեմ պատվաստանյութը, «գազանի նշանն» ու Բիլ Գեյթսի շահագրգռվածությունը. վերցվել է՝ <https://bit.ly/2TDEG9r>

65. Սանասյան, Յ. (2020, հուլիս 24). Վակցինա Կովիդ-19: [Ֆեյսբուքյան ուղիղ եթեր]. վերցվել է՝ <https://bit.ly/3hIER2l>

շահ: Մասնավորապես Տավուշի տեքստիլ արտադրամասի բացումը կապվեց վարչապետի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի, ինչպես նաև ընտանիքի այլ անդամների և գործարար Սամվել Ալեքսանյանի հետ⁶⁶:

Պատվաստանյութերի «վնասակարությունը» էլ ավելի դիվանագնեսելու համար դավադրության տեսությունների մշակողները քննարկման դաշտ բերեցին դրանց՝ մարդկանց «նույնասեռական դարձնելու», «նույնասեռականների թիվը մեծացնելու մարդկության դեմ նոր մարտավարության» կեղծ օրակարգերը՝ հանրային վախերն ու տագնապները սրելու համար: «Պատվաստանյութերը պարունակում են գենետիկ մատերիալ, ուստի եթե հակառակ սեռի գենետիկ կողմ պարունակող պատվաստանյութ է ներարկվում, այն խաթարում է ներարկվողի գենետիկ կողմը: Դրա համար էլ այսօր շատացել են համասեռամուլները»⁶⁷:

Հետաքրքրական է, որ պատվաստանյութերի՝ իբրև նույնասեռականության տարածման, մարդկանց չիպավորման և այլ առասպելական քննարկումները կարծես թե դադարեցին, երբ 2021 թվականի հունվարին Հայաստանը պաշտոնապես գրանցեց ռուսական «Սպուտնիկ V» պատվաստանյութը⁶⁸:

2.2. Լանցարոտեի կոնվենցիայի վավերացման շահարկումները

Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան⁶⁹ (առավել հայտնի է որպես Լանցարոտեի կոնվենցիա) նպատակ ունի կանխարգելելու երեխաների սեռական շահա-

66. 7or.am. (2020, մայիս 21). *5 դրամ արժեցող դիմակները վաճառվում են 200 դրամով. ո՞րք են գնում միլիարդները*. վերցվել է՝ <https://bit.ly/36hetjC>

67. Yerevan Today Live. (2019, դեկտեմբեր 16). *Պատվաստումներն ավելացնում են համասեռամուլների թիվը. Մարինա Խաչատրյան*. վերցվել է՝ <https://bit.ly/3AHapYb>

68. livenews.am. (2021, փետրվար 1). *Հայաստանը գրանցել է ռուսական «Սպուտնիկ V» պատվաստանյութը*. վերցվել է՝ <https://bit.ly/3AAJddh>

69. Կոնվենցիան ընդունվել է 2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանցարոտե քաղաքում, որի համար էլ առավել հայտնի է Լանցարոտեի կոնվենցիա անվանումով:

գործումը և նրանց հանդեպ սեռական բռնությունը և պայթարելու դրանց դեմ, պաշտպանելու սեռական շահագործումից և սեռական բռնությունից տուժած երեխաների իրավունքները, ինչպես նաև նպաստելու ազգային և միջազգային համագործակցության զարգացմանը երեխաների սեռական շահագործման և նրանց հանդեպ սեռական բռնության դեմ մղվող պայքարում⁷⁰: Հայաստանը կոնվենցիան ստորագրել է 2010 թվականին⁷¹: 2020-ի մայիսի 11-ին ԱԺ-ն 79 կողմ, 14 դեմ ձայներով վավերացրեց Լանցարոտեի կոնվենցիան: Ստորագրելով և վավերացնելով Լանցարոտեի կոնվենցիան՝ պետություններն իրենց պատրաստակամությունն են հայտնում միավորելու բոլորի ջանքերը երեխաներին սեռական բռնությունից պաշտպանելու, սեռական բռնությունից տուժած երեխաներին աջակցություն տրամադրելու համար, ինչպես նաև երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության կանխարգելման⁷² և դրա դեմ պայքարի նպատակով միջազգային համագործակցություն հաստատելու և այդ արատավոր երևույթների դեմ միջազգային պայքար մղելու համար⁷³:

2010 թվականին ստորագրելուց տասը տարի անց՝ 2020-ին վավերացվելուց հետո միայն Կոնվենցիան հայտնվեց հանրային-քաղաքական որոշ «հայտնի» շրջանակների քննարկման առանցքում: Տարբեր շրջանակների կողմից այս Կոնվենցիայի դեմ արշավը նոր թափ ստացավ սոցիալական ցանցերում. իշխանություններին սկսեցին մեղադրել «օտար» բարքերը Հայաստան բերելու մեջ: Նույն խմբավորումների շրջանում նույնիսկ եղան մարդիկ, որոնք ընդհանրապես հերքում էին, որ Հայաստանում անչափահասների

70. Council of Europe. (2007, հոկտեմբեր 25). «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան. վերցվել է՝ <https://rm.coe.int/168046e1e4>

71. parliament.am. (2020, ապրիլ 8). ՀՀ օրենքը «Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին. վերցվել է՝ <http://bit.ly/parliament-am-drafts>

72. ampop.am. (2020, մայիս 22). Լանգարոտեի կոնվենցիա. միավորող փաստաթուղթ՝ սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու համար. վերցվել է՝ <https://ampop.am/armenia-ratified-lanzarote-convention/>

73. Council of Europe. (2007, հոկտեմբեր 25). «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան. վերցվել է՝ <https://rm.coe.int/168046e1e4>

Նկատմամբ սեռական բռնություն կա՝ Կոնվենցիան համարելով երկրում այլասերություն տարածելու միջոց⁷⁴: Այս նույն խմբերը շարունակաբար հերքում են, որ Հայաստանում կանանց նկատմամբ բռնություն կա⁷⁵:

Բնավ զարմանալի չէ, որ այս Կոնվենցիայի դեմ պայքարում հատկապես աչքի են ընկնում մարդիկ, որոնք հետհեղափոխական Հայաստանում պայքարում են ժողովրդավարացմանը և մարդու իրավունքների ամրապնդմանը նպաստող հնարավոր բարեփոխումների և առաջադիմական քաղաքացիական հասարակության, մասնավորապես Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի գրասենյակի և նրանց հետ ենթադրյալ կամ իրական կապ ունեցող անհատների և կազմակերպությունների, քաղաքական գործիչների, գեներային և LQFS հարցերով զբաղվող իրավապաշտպանների և ակտիվիստների, պատվաստումների և այլ հարակից հարցերի դեմ, ունեն հստակ փոխառնչություններ նախկին իշխանությունների հետ և հետապնդում են նեղ քաղաքական շահեր:

Այսպես՝ այս խմբերը Լանցարոտեի կոնվենցիայի վավերացման դեմ հետահայաց պայքարում թիրախավորում են իշխանություններին՝ նրանց ներկայացնելով որպես «ազգակործանների», «այլասերվածության պաշտպանների», իսկ իրենց՝ որպես «ազգափրկիչների, ազգապահպանների», «այլասերվածության դեմ պայքարողների», «ընտանիքի՝ որպես հասարակության հիմնական բջիջի առողջության ու բարեկեցության մասին մտածողների»: Ըստ էության՝ նման ինքնաներկայացումներից հետո հանրությունը կարող է արդարացված ակնկալիքներ ունենալ, որ հենց այս խմբերի ներկայացուցիչները և պայքարի առաջամարտիկներն իրենք պետք է դառնան երեխաների հանդեպ սեռական բռնության, սեռական ոտնձգությունների և առհասարակ երեխաների նկատմամբ բռնության դեմ ամենահնչեղ պայքարողները: Սակայն այդ դեպքում հարց է ծագում, թե ինչու են այս խմբավորումների

74. medialab.am. (2020, օգոստոս 8). *Անչափահասի նկատմամբ սեռական բռնություն, հղիություն, անապահովություն ու տաքուններ. մասնագետները փոփոխության հույսեր են փայփայում*. Վերցվել է՝ <https://medialab.am/86589/>

75. Խալաթյան, Մ., Սանուսյան, Ա., Մարգարյան, Ն. (2020), *Հակազենդերային արշավների գործունեությունը, հռետորաբանությունը և նպատակները հետհեղափոխական Հայաստանում* (Ա. Ժամակոչյան, խմբ.). Սոցիոսկոպ:

Ներկայացուցիչները պայթարում մի կոնվենցիայի և օրենսդրական կարգավորման դեմ, որն, ըստ էության, ավելի է խստացնում պատիժը երեխաների նկատմամբ սեռական բռնության և սեռական ոտնձգությունների դեպքերում և առաջարկում միջպետական ու միջազգային ջանքեր ներդնել՝ այդ արատավոր երևույթների և պրակտիկաների դեմ առավել համապարփակ և համակարգային ձևով պայթարելու համար:

Այսպես՝ Կոնվենցիայի վավերացման դեմ պայթարողները իրենց հրապարակային ելույթներում նշում են, որ Կոնվենցիան, որպես այդպիսին, «թվում է, թե խնդրահարույց չէ», ավելին՝ այն կարևոր փաստաթուղթ է⁷⁶: Իբրև Կոնվենցիայի հիմնական առարկություն մատնանշվում էր դրա՝ համավարակի շրջանակում հայտարարված արտակարգ դրության պայմաններում վավերացումը, ինչպես նաև դրա շուրջ լայն հանրային քննարկման բացակայությունը: Այս խմբերին, ինչպես իրենք են պնդում, անհանգստացնում է ոչ թե փաստաթուղթն ինքնին, այլ այն չափորոշիչները, որոնցով Կառավարությունն առաջնորդվելու է Կոնվենցիայի մեջ սահմանված և պետության հանձն առած պարտավորություններն իրականացնելիս: Կոնվենցիայի վավերացման դեմ պայթարողների մյուս «մտահոգությունն» այն է, որ, ըստ իրենց, դրա վավերացման ջատագովներն այն պատգամավորներն են, որոնք իրենց կյանքի տարբեր ժամանակաշրջաններում ինչ-որ առնչություն են ունեցել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի գրասենյակի հետ, կողմ են քվեարկել Կոնվենցիայի վավերացմանը կիսադատարկ դահլիճում, և իրենք իրենց ներկայացնում են որպես երեխաների իրավունքներով մտահոգ քաղաքական գործիչների, իսկ իրական մտահոգված անձանց համարում են «հետամնաց», «անգրագետ», «տգետ»⁷⁷:

Մյուս կողմից՝ Կոնվենցիայի վավերացմանը դեմ հանդես եկող անհատների և խմբերի հանրային խոսքի, հրապարակումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց համար «խնդրահարույց են» Լանցարոտեի կոնվենցիայի երկու՝ 2-րդ և 6-րդ հոդ-

76. Չոհրաբյան, Ա. (2020, մայիս 19). *ԼԱՆՉԱՐՈՏԵԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ*. [Ֆեյսբուքյան տեսակյութ]. վերցվել է՝ <https://bit.ly/36dFDb8>

77. 5 TV Channel. (2020, մայիս 15). *Լանգարոտեի կոնվենցիայով տարրական դասարաններից երեխաներին սեռական դաստիարակություն է տրվելու*. վերցվել է՝ <https://www.youtube.com/watch?v=i35x68E0LYE>

վածները: Սակայն ի՞նչ են ասում այս հոդվածները: Այսպես՝ 2-րդ հոդվածը խտրականության արգելքի սկզբունքի մասին է, որով Կոնվենցիան վավերացրած պետությունները պարտավորվում են կիրառել Կոնվենցիայի դրույթները և իրականացնել նախատեսված գործողություններն առանց խտրականության, այն է՝ «անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրույթունից, ծննդից, սեռական կողմնորոշումից, առողջական վիճակից, հաշմանդամությունից կամ այլ դրույթունից»⁷⁸: Կոնվենցիայի մյուս շահարկվող հոդվածը 6-րդն է, որով սահմանվում է, որ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցառումներ, «որպեսզի երեխաները տարրական և միջնակարգ կրթություն ստանալու ժամանակ տեղեկանան սեռական շահագործման և սեռական բռնության հետ կապված վտանգի հետ, ինչպես նաև իրենց պաշտպանելու միջոցների մասին՝ համաձայն իրենց կարողությունների: Նման տեղեկատվությունը, որ անհրաժեշտության դեպքում նաև ծնողների հետ համագործակցելով, պետք է տրամադրվի սեռական դաստիարակության առավել ընդհանուր համատեքստում, և հարկավոր է առանձին ուշադրություն հատկացնել վտանգավոր իրավիճակների վրա, մասնավորապես՝ կապված տեղեկատվական և հաղորդակցության նոր տեխնոլոգիաների օգտագործման հետ»⁷⁹:

Կոնվենցիայի վավերացման դեմ պայքարող անհատները և խմբերը շահարկում են սեռական կողմնորոշման հիմքով խտրականությունից պաշտպանված լինելու հատկանիշը՝ պնդելով, թե «սեռը և սեռական կողմնորոշումը տարբերվում են միմյանցից, և երբ խոսում ես սեռի մասին, առանձնացնում ես երկու սեռ՝ արական և իգական, իսկ երբ խոսում ես սեռական կողմնորոշման մասին, արդեն խոսում ես երրորդ սեռի մասին... Իսկ երրորդ սեռ ասելով պետք է հասկանալ մոտ 300 տեսակի գենդերները: Այստեղ մենք նկատի ունենք գենդեր, այսինքն՝ սոցիալական սեռ, որն իրենից ենթադրում է այն գենդերները, որոնք որ կան այլ երկրներում, և

78. Council of Europe. (2007, հոկտեմբեր 25). «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան. (հոդված 2). վերցվել է՝ <https://rm.coe.int/168046e1e4>

79. Նույն տեղում, հոդված 6:

այդ սեռական կողմնորոշում ասվածը կարող է իր մեջ նաև այդ 300 գենդերները ներառել»⁸⁰:

Ըստ էության, այս խմբերի պայթարի առանցքում ոչ թե այս կամ այն կոնվենցիայի կամ փաստաթղթի խորքային և իրական բովանդակությունն է, այլ դրանց հանրային շահարկումը, հատկապես, եթե դրանք այս կամ այն կերպ պարունակում են հղումներ սեռական կողմնորոշմանը կամ գենդերային հարցերին:

Կարևոր է սակայն հիշել, որ ՀՀ Սահմանադրության մեջ արդեն իսկ ամրագրված է խտրականության արգելքի մասին դրույթը 29-րդ հոդվածով. *«խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»⁸¹:*

Թեև սահմանման մեջ «սեռական կողմնորոշում» հատկանիշը որպես պաշտպանված հատկանիշ առանձին նշված չէ, սակայն այն ներառված է «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների» մեջ: Ավելին՝ 2012 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ-ն ստորագրել է, իսկ 2016 թվականի փետրվարի 5-ին վավերացրել է, օրինակ, «Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, որում դարձյալ 2-րդ հոդվածը սահմանում է խտրականության բացառման սկզբունքը, մասնավորապես. *«Կողմերի կողմից սույն Կոնվենցիայի դրույթների կիրարկումը, մասնավորապես՝ տուժողների իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջոցների օգտագործման հնարավորությունը, պետք է լինի ապահովված՝ բացառելով խտրականությունը որևէ հիմքով, ինչպես, օրինակ՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, էթնիկ*

80. 5 TV Channel. (2020, մայիս 15). *Լանգարոտեի կոնվենցիայով տարրական դասարաններից երեխաներին սեռական դաստիարակություն է տրվելու*. վերցվել է՝ <https://www.youtube.com/watch?v=i35x68E0LYE>

81. arlis.am. (2015, դեկտեմբեր 22.). *ՀՀ Սահմանադրություն*. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ. վերցվել է՝ <https://bit.ly/3dJsdYA>

փոքրամասնությանը պատկանելությունը, սեռական կողմնորոշումը, առողջական վիճակը, հաշմանդամությունը կամ այլ կարգավիճակը»⁸²:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) խտրականության արգելքը երաշխավորում է 14-րդ հոդվածով, որը երաշխավորում է նաև հավասար վերաբերմունք Կոնվենցիայում ամրագրված մյուս իրավունքներից օգտվելու դեպքում⁸³: Թեև ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածն ակնհայտորեն չի ընդգրկում «սեռական կողմնորոշում» որոշակի հատկանիշը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտարարել է, որ սեռական կողմնորոշումը Կոնվենցիայի 14-րդ հոդվածով պաշտպանված «այլ հատկանիշների շարքում» է⁸⁴: Ավելին՝ հետագա կոնվենցիաներում և կամընտիր արձանագրությունների տեքստերում առկա խտրականության արգելքի մասին հոդվածների պաշտպանված հատկանիշներում ավելացվել է «սեռական կողմնորոշումը»՝ որպես պաշտպանված հատկանիշ: Հետևաբար սեռական կողմնորոշման հիմքով խտրականության արգելքը հայաստանյան օրենսդրական, հատկապես կոնվենցիոն դաշտում նորություն չէ, ուստի դրա՝ այս կամ այն կոնվենցիայում իբրև նորույթ ներկայացնելը, դրա շուրջ մեղիա աղմուկ բարձրացնելը ոչ այլ ինչ է, քան հանրային տրամադրությունների մանիպուլյացիա:

Ըստ հակազենդերային արշավների ներկայացուցիչների պնդումների՝ Կոնվենցիայի մյուս «խնդրահարույց» հոդվածը 6-րդն է, որը նախատեսում է տարրական ու միջնակարգ կրթության ընթացքում երեխաներին՝ երեխաների սեռական շահագործման կամ սեռական այլ բնույթի գործողություններից պաշտպանվելու մասին տեղեկությունների տրամադրումը: Հակազենդերային

82. irtek.am. (2011, հոկտեմբեր 28). Եվրոպայի խորհրդի կոնվենցիան «Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին»։ Վերցվել է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=92827>

Council of Europe. (2011, October 25). *Council of Europe Convention on the counterfeiting of medical products and similar crimes involving threats to public health*. Վերցվել է՝ <http://bit.ly/coe-int-conventions>

83. Council of Europe. (1950, November 4). *Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms*. Վերցվել է՝ <https://bit.ly/3jLftEL>

84. ՄԻԵԿ, Ֆրետտեն ընդդեմ Ֆրանսիայի [Fretté v. France] (թիվ 36515/97), 26 փետրվարի, 2002 թ., կետ 32:

արշավների ներկայացուցիչները, մասնավորապես ՀՀ Փաստաբանների միության նախագահ Արա Չոհրաբյանը (ով ակտիվորեն պայքարում է թե՛ այս, թե՛ Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման դեմ), տարածում են երեխաների իրավունքների պաշտպանությանը միտված փաստաթղթերը և դրանց շատագուվությամբ զբաղվող Արևմուտքի երկրներին դիվակասացնող մանկապուլացիաներ՝ պնդելով, թե Եվրոպայում գոյություն ունեն երեխաների ներաշխարհը խարխիլող սեռական կրթության չափորոշիչներ. «Մասնավորապես 6-9 տարեկանների համար, որն ինչպես գիտեք տարրական կրթությանն է առնչվում, նախատեսված էին տեղեկություններ տրամադրել սեռական ակտի մասին, ինքնաբավարարման մասին, հակաբեղմնավորիչների մասին, մայրության, հղիության ցիկլերի մասին և այլն: Տարբեր մասնագետներ կարծում են, որ մինչև 9 տարեկան երեխաներին նման տեղեկատվություն տրամադրելը հենց վնասում է երեխաների առողջությանը և նրանց հոգեբանությանը»⁸⁵:

Սակայն ինչ է ասում Կոնվենցիայի բացատրական զեկույցն իրականում. այսպես, համաձայն բացատրական զեկույցի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է «Երեխաների կրթությունը» և արձանագրում, որ «երեխաներին ընդհանրապես սեռական բնույթի հարցերի և սեռական շահագործման կամ սեռական բնույթի բռնությունների հետ կապված վտանգների վերաբերյալ կրթելը նախ և առաջ ծնողների պարտականությունն է»⁸⁶: Այնուամենայնիվ, կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ ծնողներն ի վիճակի չեն կամ չեն ուզում դա անել, օրինակ, երբ ծնողը ներգրավված է երեխայի նկատմամբ բռնության գործընթացում, կամ երբ համայնքի մշակութային ավանդույթները թույլ չեն տալիս այդպիսի հարցերը բացահայտ կերպով քննարկել: Ավելին, երբեմն երեխաներն ավելի մեծ ուշադրություն են դարձնում այն ամենին, ինչ իրենց բացատրվում է այլ միջավայրում, քան տանը, հատկապես դպրոցում, երբ համապատասխան տեղեկություններ իրենց տրամադրում են մասնագետները (օրինակ՝ ուսուցիչները,

85. Չոհրաբյան, Ա. (2020, մայիս 19). *ԼԱՆՉԱՐՈՏԵԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ*. [Ֆեյսբուքյան տեսակյութ]. վերցվել է՝ <https://bit.ly/3yxMyZ3>

86. moj.am. (2020, ապրիլ 27). «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան և բացատրական զեկույցը. վերցվել է՝ <https://bit.ly/3yvxXwT>

բժիշկները, հոգեբանները): Հետևաբար 6-րդ հողվածով նախատեսվում է պետությունների պարտավորությունը՝ երաշխավորելու, որ երեխաներին կրթության տարրական [առաջնային օղակ] և միջնակարգ [երկրորդային օղակ] մակարդակներում ուսուցանվեն սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների հետ կապված վտանգները, և այն, թե ինչպես նրանք իրենց պաշտպանեն ու օգնություն խնդրեն»⁸⁷:

Քանի որ այս տեղեկատվության տրամադրման նպատակը սեռական շահագործումից ու սեռական բնույթի բռնության վտանգներից երեխաների պաշտպանությունն է, Կոնվենցիան անմիջական պարտավորություններ է դնում նաև պետությունների վրա և սահմանում, որ նման կանխարգելիչ տեղեկատվությունը պետք է տրամադրվի «տարրական ու միջնակարգ կրթության» ընթացքում: Այդուհանդերձ, դպրոցների մասին որևէ հիշատակում չկա՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կան երեխաներ, որոնք կրթություն ստանում են տանը, հետևաբար Կոնվենցիան պետք է ներառական լինի նաև նման երեխաների համար: Բացատրական զեկույցում սահմանված է նաև, որ երեխաներին նման տեղեկության տրամադրումը պարտադիր չէ, որ դասավանդման մաս կազմի, կարող է տրամադրվել այլ համատեքստում՝ համագործակցելով ծնողների հետ և հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, օրինակ՝ երեխաների ծնողազրկությունը, ինամբի հաստատություններում գտնվելը, ինչպես նաև այն, որ երեխաների ծնողները և հարազատները կարող են ներգրավված լինել երեխաների նկատմամբ սեռական բռնության մեջ⁸⁸:

Այսպիսով՝ երեխաների՝ սեռական բռնության և սեռական շահագործման հարցերի շուրջ կրթությունն իրավամբ ամրագրված է Կոնվենցիայով, սակայն դրա կազմակերպումը թողված է բացառապես պետություններին, որոնք հաշվի են առնում սեփական առանձնահատակությունները: Ընդ որում՝ Կոնվենցիան հնարավորություն է տալիս, որ կրթությունը կազմակերպվի ոչ միայն ֆորմալ ուսումնական հաստատություններում, այլև տնային պայմաններում: Մյուս կողմից՝ պնդումները, թե գոյություն ունեն համընդհանուր, այսպես կոչված «Սեռական կրթության ու դաստիարակու-

87. Նույն տեղում

88. Նույն տեղում

թյան եվրոպական ստանդարտներ» կամ «Սեռական կրթության ստանդարտները Եվրոպայում» ձեռնարկ⁸⁹, որը պարտադրվելու է այլ երկրներին, հանրային տրամադրությունները մանիպուլացնող ապատեղեկատվությունների շարքից են. վերը նշված փաստաթուղթը նախատեսված է քաղաքականություն մշակողների, առողջապահական համակարգի ղեկավարների և առողջապահական ու կրթական ոլորտների մասնագետների համար, չունի իրավական ուժ, տպագրված է խորհրդատվական նպատակով⁹⁰:

Ավելին՝ Կոնվենցիան ունի հստակ տրամաբանություն՝ նախ և առաջ շեշտադրելով, թե ինչպիսի գիտելիքներով և իրազեկվածության աստիճանով պետք է օժտված լինեն այն մարդիկ, որոնք աշխատում են երեխաների հետ: Ըստ էության՝ կրթությունն առաջին հերթին վերաբերում է ոլորտի մասնագետներին՝ նրանց մեջ ձևավորելու մասնագիտական նրբանկատություն՝ երեխաների հետ նրանց տարիքին և կարողություններին պատշաճ գիտելիք փոխանցելու համար⁹¹:

Ավելին՝ ՀՀ-ում 2008 թվականից իրականացվում է «Առողջ ապրելակերպի դասընթացը», 2010 թվականին այն հաստատվել է հանրակրթության պետական չափորոշիչով: Վերջինս այն նորմատիվ ակտն է, որը կարգավորում է ՀՀ-ում կրթության բովանդակությունը: Բացի այդ՝ կան նաև մեթոդական ձեռնարկներ, ազգային կրթական համակարգում ընդունված փաթեթներ, որոնք կարգավորում են ուսուցման թեմաները և դրանց մատուցման ձևերը: Մասնավորապես, սեռական հասունացմանը վերաբերող թեմաները դասավանդվում են դպրոցներում 2008 թվականից⁹²: Ավելին՝ Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին ՀՀ օրենքի 5-րդ՝ Դեռահասների վերարտադրողական առողջության պահպանման մասին հոդվածը սահմանում է

89. Федеральный центр просвещения в сфере здравоохранения. (2010). *Стандарты сексуального образования в Европе*. Վերցվել է՝ <http://bit.ly/bzga-sexuality-education-standards>

90. fip.am. (2020, հունիս 4). *Արա Չոհրաբյանն ընդդեմ սեռական կրթության. ինչ մանիպուլյատիվ պնդումներ է անում Փաստաբանների պալատի նախագահը*. վերցվել է՝ <https://fip.am/11725>

91. Armenian Public TV. (2020, մայիս 20). *Եկեք հասկանալք. քննարկվող կոնվենցիան. վերցվել է՝* <https://bit.ly/3hktlUN>

92. Նույն տեղում

դեռահասների սեռական դաստիարակության, սեռական և վերարտադրողական առողջության պահպանման, սեռական հասունացման և այլ հարցերի շուրջ դեռահասների իրավունքները: Նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ «Դեռահասների սեռական դաստիարակությունը հանրակրթական դպրոցներում և կրթական այլ հաստատություններում իրականացնում են մասնագիտական պատրաստվածություն ունեցող անձինք ընտանիքի, առողջապահական ծառայությունների, հասարակական կազմակերպությունների, հանրության հետ սերտ համագործակցությամբ»:

Հակազենդերային արշավորդների կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, մասնավորապես սեռական դաստիարակության և կրթության առնչությամբ բարձրացված աղմուկը փորձ է «այլասերումից» երեխաների «փրկության» անվան ներքո առաջ մղելու հանրային-քաղաքական կեղծ և մանիպուլյատիվ օրակարգեր ձևակերպելու սեփական նեղ քաղաքական շահերը՝ նպատակայնորեն մոռացության տալով, որ ՀՀ օրենսդրությամբ արդեն իսկ ամրագրված են սեռական դաստիարակության և կրթության մասին դրույթները, մասնավորապես մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին ՀՀ օրենքում, որն ուժի մեջ է մտել դեռես 2003-ի հուլիսին⁹³:

Միաժամանակ այս նույն անհատները և խմբերը, հերքելով Հայաստանում կանանց նկատմամբ բռնության իրողությունը, պայքարում էին նաև ընտանեկան բռնության դեմ օրենքի ընդունման դեմ՝ խեղաթյուրելով «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բովանդակությունը^{94 95}:

Ամփոփելով նշենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանցարոտեում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոն-

93. arlis.am. (2003, հուլիս 7). ՀՀ օրենքը մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին. վերցվել է՝ <http://bit.ly/arlis-doc75284>

94. fip.am. (2019, հուլիս 12). «Ստամբուլի կոնվենցիայի» շուրջ մանիպուլյացիաները. վերցվել է՝ <https://fip.am/7547>

95. fip.am. (2019, օգոստոս 15). Ինչպես է շահարկումների ենթարկվում «Ստամբուլյան կոնվենցիան». վերցվել է՝ <https://fip.am/7942>

վեցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2020 թվականի մարտի 31-ին կայացրել է որոշում, ըստ որի՝ 2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանգարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը, իսկ որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից⁹⁶:

Ավելին՝ 2010-2019 թվականների ընթացքում, ըստ Ոստիկանության տեղեկատվության բաժնի տրամադրած տվյալների, ՀՀ-ում մոտ 700 անչափահաս երեխա տուժել է ՀՀ Քրեական օրենսգրքի 18-րդ գլխում սահմանված հանցագործություններից՝ բռնաբարություն, սեռական բնույթի բռնի գործողություններ, սեռական բնույթի գործողությունների հարկադրանք, մինչև 16 տարեկան երեխաների նկատմամբ սեռական բնույթի գործողությունների իրականացում և անառակաբարո գործողություններ⁹⁷: Պաշտոնական տվյալներով՝ տարեկան շուրջ 100 երեխա սեռական բռնության է ենթարկվում⁹⁸: Հարկ է հաշվի առնել, որ սրանք ընդամենը ոստիկանությունում հայտնված բռնության դեպքերն են, մինչդեռ, հաշվի առնելով ինդրի զգայունությունը, հանրային-մշակութային կարծրատիպերը և ոստիկանական համակարգի հանդեպ սակավ վստահությունը, կարելի է ընդամենը ենթադրել, որ երեխաների հանդեպ բռնության դեպքերն ավելին են, քան 700-ը: Այնուամենայնիվ, անցյալ տասը տարիների ընթացքում այս խմբերի ներկայացուցիչները երբևէ չեն պայթարել երեխաների նկատմամբ

96. concourt.am. (2020, մարտ 31). *Հանուն Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումը 2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանգարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով վերցվել է՝ <http://bit.ly/concourt-decision1519>*

97. ՀՀ Քրեական օրենսգրք, Գլուխ 18, *Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ*. հոդվածներ 138, 139, 140, 141, 142:

98. Armenian Public TV. (2020, մայիս 20). *Եկեք հասկանանք. Քննարկվող կոնվենցիան*. վերցվել է՝ <https://bit.ly/3wvfj2FT>

բռնության դեմ, սեռական բռնության ենթարկված երեխաների իրավունքների պաշտպանության և առհասարակ երեխաների իրավունքների պաշտպանության համար: Հակառակը, նրանք շարունակաբար թիրախավորել են երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավապաշտպան անհատներին և կազմակերպություններին, հյուսել դավադրության ամենատարբեր տեսությունները նրանց գործունեության շուրջ:

2.3. Հակաաբորտային նախաձեռնությունը և Նեղ կուսակցական շահերը

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը և նրա պատգամավորները հաճախ են ԱԺ-ում հանդես գալիս հակաիրավապաշտպան, մարդու իրավունքներին հակասող օրինագծերի հեղինակմամբ, դրանց քննարկմամբ:

Ավելին՝ սովորաբար ներկայացվող օրինագծերը միտված են սպասարկելու կուսակցության անդամների նեղ քաղաքական կամ բիզնես շահերը⁹⁹, պայմանավորված չեն հանրային պահանջով կամ անհրաժեշտությամբ, երբեմն էլ նախորդում կամ հաջորդում են

99. Օրինակ, 2018 թվականի մայիսից շատ չանցած, ԲՀԿ անդամների կողմից ձեռնարկվեց «Արհմիությունների մասին» օրենքում փոփոխությունների գործընթաց: ԲՀԿ պատգամավորները սույն օրենքի նախագծով առաջարկում էին սահմանել «անկախ արհմիություն ստեղծելու և դրան անդամակցելու հնարավորություն, ինչը հասանելի կլինի տարբեր գործատուների մոտ աշխատող ամենատարբեր մասնագիտություններ ունեցողների համար, եթե արհեստակցական միություններին անդամակցելը տվյալ կատեգորիայի աշխատողների համար արգելված չէ օրենքով»: Այս նախաձեռնության քաղաքական նպատակը ԲՀԿ նախագահ և խոշոր սեփականատեր Գագիկ Ծառուկյանին (և նրա դասակիցներին) իր տարողորտ բիզնեսներում աշխատողների նկատմամբ կազմակերպված վերահսկողություն սահմանելու նոր հնարավորություն ընձեռելն էր: Քաղաքական նոր իրավիճակում բացահայտ ընտրակաշառք բաժանելուց զրկված խոշոր սեփականատերերը այժմ կկարողանային, արհմիության ապարատի միջոցով իրենց տնտեսական լծակները կիրառելով, քաղաքական նոր և երաշխավորված կշիռ ձեռք բերել: Մյուս կողմից՝ կապահովագրվեին իրենց աշխատողների հնարավոր բողոքների բարձրաձայնումից: Տես նաև՝ Ժամակոչյան, Ա, Մարգարյան, Ն. (2021). Արհմիությունների գործունակության հարցը Գյումրու «Սաստեքսի» բանվորուհիների բողոքի օրինակով. *Տնտեսաքաղաքական հրատապ հարցեր. հետազոտությունների ժողովածու*. Սև Բիբար, Սոցիոսկոպ, Քաղաքական դիսկուրս (խմբ.). [socioscope.am](https://bit.ly/socioscope-economic-political). վերցվել է՝ <https://bit.ly/socioscope-economic-political>

այնպիսի իրադարձությունների, որտեղ կուսակցության ներկայացուցիչների «դեմքը փրկության կարիք ունի», կամ էլ անհրաժեշտ է հանրության ուշադրությունը շեղել կուսակցության շուրջ եղած սկանդալներից (Սոցիոսկոպ, 2020):

2020 թվականի հունիսին ԱԱԾ-ն խուզարկություն իրականացրեց Գագիկ Ծառուկյանի տանը¹⁰⁰, երկու օր անց՝ հունիսի 16-ին, ԱԺ հերթական նիստի սկզբում գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը նախ ներկայացրեց ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, ապա վերջինիս որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու միջնորդությունը: Ելույթների ընթացքում ԲՀԿ գրեթե բոլոր պատգամավորների, այդ թվում՝ Գագիկ Ծառուկյանի ելույթում «բարոյականությունը» անցնում է կարմիր թելի պես: Գագիկ Ծառուկյանի խմբակցության պատգամավորները հորդորում էին ավելի «բարոյական» տեսանկյունից նայել և մեկնաբանել իրադարձությունները¹⁰¹:

Գագիկ Ծառուկյանի շուրջը ստեղծված այս քաղաքական թոհուրոհին¹⁰² զուգահեռ աճում էին «Բարգավաճ Հայաստան» խմբակցության կողմից ԱԺ բերվող նախագծերը, որոնք միտված էին «բարոյականության վերականգնմանը»: Այսպես՝ ագրեսիվ-հոմոֆոբ պոպուլիզմով և մարդու իրավունքները սահմանափակող նախաձեռնություններով հանդես եկող խմբակցությունը¹⁰³ մի կողմից պարբերաբար փորձում է հանրության շրջանում պահպանողական տարբեր նախագծերի շրջանառման միջոցով կերտել իր «բարոյական կերպարը», մյուս կողմից՝ հակադրվել կառավարող խմբակցությանը՝ ներկայացնելով նրան իբրև «անբարոյականի»:

100. azatutyun.am. (2020, հունիս 14). ԲՀԿ պատգամավորներ. ԱԱԾ աշխատակիցները խուզարկություն են անում Գագիկ Ծառուկյանի տանը. վերցվել է՝ <https://www.azatutyun.am/a/30669672.html>

101. azatutyun.am. (2020, հունիս 16). Գագիկ Ծառուկյանին մեղադրանք առաջադրելու և ազատությունից զրկելու միջնորդություններին ԱԺ-ն համաձայնություն տվեց. վերցվել է՝ <https://www.azatutyun.am/a/30673711.html>

102. hetq.am. (2020, հոկտեմբեր 22). Գագիկ Ծառուկյանն ազատ կարճակվի 100 մլն դրամ գրավի դիմաց. վերցվել է՝ <https://hetq.am/hy/article/123416>

103. Խալաթյան, Մ., Մանուկյան, Ա., Մարգարյան, Ն. (2020), Հակագենդերային արշավների գործունեությունը, հռետորաբանությունը և նպատակները հետհեղափոխական Հայաստանում (Ա. Ժամակոչյան, խմբ.). Սոցիոսկոպ:

Այսպես՝ ԲՀԿ պատգամավորներ Նաիրա Չոհրաբյանը և Շաբե Իսայանը 2020 թվականի սեպտեմբերին Ներկայացրին մի Նախագիծ, որն առաջարկում էր արգելել հղիության արհեստական ընդհատումը: ՀՀ գործող օրենսդրությամբ¹⁰⁴ թույլատրվում է մինչև տասներկու շաբաթական ժամանակահատվածում կատարել հղիության արհեստական ընդհատում: Պատգամավորների կողմից բերված Նախագծով արգելվում է արհեստական ընդհատումը Նաև այն պարագայում, երբ հղիությունն առաջացել է բռնաբարության հետևանքով, կամ երբ հետազոտություններով պարզվի, որ պտուղն արատ ունի: Ըստ Նախագծի հեղինակների՝ կնոջը պետք է թույլատրվի աբորտ անել միայն այն պարագայում, երբ նրա կյանքին վտանգ է սպառնում, և այդ վտանգը կարող է վերացվել հղիությունն ընդհատելով¹⁰⁵: Այդ ժամանակ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի Նախագահ Նաիրա Չոհրաբյանը, մեկնաբանելով իր առաջ քաշած օրենսդրական Նախագիծը, մասնավորապես ասել է. «Գործող օրենսդրությունը Նախատեսում է մի շարք հանգամանքներ, որոնց առկայությունը թույլ է տալիս ընդհատել հղիությունը՝ չծնված երեխային զրկելով կյանքից: Օրինակ, երբ հղիությունը մինչև 12 շաբաթական է, կինը (չծնված երեխայի մայրը) հիվանդ է, չծնված երեխայի մոտ առկա է արատ, առկա են հանգամանքներ, որոնք ավելի հավանական են դարձնում երեխայի մոտ արատների զարգացումը (ընտանիքում զարգացման արատներով երեխաների կամ սեռի հետ փոխկապակցված ժառանգական հիվանդությունների առկայություն), առկա են առողջական վիճակի հետ չկապված հանգամանքներ՝ հղիության ընթացքում ամուսնու մահը կամ ամուսնալուծությունը, կնոջ կամ ամուսնու՝ պատիժն ազատագրկման վայրում կրելն ու մի շարք այլ դեպքերում: Մինչդեռ չծնված երեխան ևս ունի կյանքի իրավունք, ու բոլոր այս կարգավորումները պետք է փոխարինել մեկ կարգա-

104. arlis.am. (2003, հուլիս 7). ՀՀ օրենքը մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին. հոդված 10. վերցվել է՝ <http://bit.ly/arlis-doc75284>

105. azatutyun.am. (2020, սեպտեմբեր 10). Ըստ բժշկի՝ հղիության արհեստական ընդհատման արգելքի դեպքում ապօրինի գործունեությունը ավելի մեծ թափ կհավաքի. վերցվել է՝ <https://www.azatutyun.am/a/30831988.html>

վորմամբ՝ հղիության արհեստական ընդհատման արգելքով: Ես և իմ գործընկեր Շաբե Իսայանը առաջիկա օրերին շրջանառության մեջ ենք դնելու չծնված երեխայի կյանքի իրավունքի մասին օրենքի նախագիծ, որով արգելվելու է հղիության արհեստական ընդհատումը, բացառությամբ, եթե բժիշկների ցուցումով կինն ունի այնպիսի առողջական խնդիրներ, որոնք անհամատեղելի են հղիության հետ: Գիտեմ, որ շատերը ասելու են, թե հղիության արհեստական ընդհատումը յուրաքանչյուր կնոջ և ընտանիքի իրավունքն է, սակայն չծնված երեխան ևս ունի կյանքի իրավունք: Իրավունք՝ ծնվելու ու ապրելու: Եվ որևէ մեկը հենց այնպես, իր կամ իր ընտանիքի հավեսի կամ երեխայի սեռը չհավանելու համար կնոջը չպիտի դրդի նման ծայրահեղ քայլի»:

Մասնավորապես, «Vardanyan & Partners» իրավաբանական գրասենյակի տղամարդ փաստաբաններ Ներսես Իսաչանյանը, Վարուժան Վարդանյանը և Վահե Սիմոնյանը ԱԺ ներկայացրին «Չծնված երեխայի կյանքի իրավունքի մասին» ՀՀ օրենքի և կից օրենքների նախագծերի վերաբերյալ մի հանրագիր¹⁰⁶, որով առաջարկվում էր օրենքով ամրագրել չծնված երեխայի կյանքի իրավունքը, իսկ հղիության արհեստական ընդհատման միջոցով երեխային կյանքից զրկելը թույլատրել միայն այն դեպքում, երբ նման ընդհատումը կարող է վերացնել երեխայի մոր կյանքին սպառնացող վտանգը, և չծնված երեխային կյանքից ապօրինի զրկելու համար նախատեսել քրեական պատասխանատվություն՝ միաժամանակ պատասխանատվությունից ազատելով երեխայի մորը և բարեխիղճ բուժաշխատողներին¹⁰⁷: 2020 թվականի սեպտեմբերին սույն հանրագիրը քննարկվել է ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում, որի արդյունքում էլ որոշվել է մերժել հանրագրի հեղինակների կողմից առաջարկվող «Չծնված երեխայի կյանքի իրավունքի մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների

106. parliament.am. (2020, հունիս 26). Հանրագիր. վերցվել է՝ <http://bit.ly/parliament-hanragir>

107. Նույն տեղում

վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը շրջանառության մեջ դնելու մասին առաջարկությունը¹⁰⁸:

ԲՀԿ-ն և հակազենդերային այլ խմբերի ներկայացուցիչներ փորձեցին հանրային քննարկման առանցք բերել աբորտի արգելքի հարցը՝ այդ կերպ ջանալով բողոսարկել ԲՀԿ կուսակցության առաջնորդի նկատմամբ հարուցված քրեական գործերի մասին խոսակցությունները: Միաժամանակ այս հնարքով փորձեցին հանրությանը ներկայանալ իբրև «բարեպաշտ», «բարձր բարոյակալություն ունեցող անձինք» հետագայում իրենց առջև քաշված մեղադրանքները «բարոյականությամբ» չեզոքացնելու նպատակով:

Աբորտների արգելքը և այն իբրև չձևված երեխայի կյանքի իրավունք ներկայացնելը աշխարհի աջ պուսպուլիստական, հետադիմական և պահպանողական խմբերի մշտական օրակարգում է. որոշ երկրներում նրանք հաջողել են օրենքով հասնել աբորտների արգելքի (օրինակ՝ Լեհաստանում¹⁰⁹), որոշ երկրներում էլ դեռևս շարունակում են համառ պայքարը, որպեսզի ոչ միայն արգելեն աբորտները, այլև որպեսզի կանանց մտքի ծայրով անգամ աբորտ անելու գաղափարը չանցնի¹¹⁰: Հետագայում, իհարկե, բախվելով մասնագիտական հանրույթի, հիմնականում առողջապահության ոլորտի ներկայացուցիչների, առաջադիմական քաղաքացիական հասարակության, ինչպես նաև քաղաքացիների քննադատությանը, պատգամավոր Նաիրա Չոհրաբյանը, ով դեռևս 2020 թվականի սեպտեմբերին ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն էր, մեղմեց իր դիրքորոշումը՝ պնդելով, որ առաջարկի «առաջին և միակ նպատակը» սելեկտիվ աբորտների խնդրի լու-

108. parliament.am. (2020, սեպտեմբեր 9). ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի որոշումը 2020 թվականի հունիսի 26-ին Ազգային ժողովի նախագահի կողմից ուղարկված հանրագրի մասին. վերցվել է՝ <http://bit.ly/parliament-committee-docs7>

109. euronews.com. (2021, հունվար 28). Poland abortion law: Protesters take to streets again as near-total ban comes into force. Վերցվել է՝ <http://bit.ly/euronews-poland-abortion-law-protests>

110. DiBranco, A. (2020, February 3). *The Long History of the Anti-Abortion Movement's Links to White Supremacists*. thenation.com. Վերցվել է՝ <http://bit.ly/thenation-anty-abortion>

ծումն է, և բոլոր տեսակի արբորտների արգելքը ճիշտ չի համարում¹¹¹. «Մենք խնդիր չունենք կյանքի գնով այդ նախագիծն անցկացնելու: Առաջարկը եղել է հանրային սեկտորից: Մենք պատրաստվում ենք առաջիկայում լայն քննարկում կազմակերպել նախաձեռնությանը դեմ և կողմ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Եթե կգանք միասնական համաձայնության բոլոր շահառու կողմերի հետ, նախաձեռնությունը կղնենք օրենքի նախագծի տեսքով, չենք գա, ուրեմն, բնականաբար, այդ գաղափարն օրենքի նախագծի տեսք չի ստանա»¹¹²:

Պնդումները, թե հղիության արհեստական ընդհատումն օրենքով արգելելը կլուծի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման՝ Հայաստանում տարածված խնդիրը, հեռու է փաստարկված հիմնավորում լինելուց: Եթե դիտարկենք այն երկրների (մասնավորապես Հնդկաստանի և Չինաստանի) օրինակները, որտեղ արգելված են սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները, կարող ենք տեսնել, որ նման օրենքների ընդունմամբ խնդիրը չի լուծվել¹¹³: Սեռով պայմանավորված արբորտների պատճառը խորն արմատացած հայրիշխանական մշակույթն է, գենդերային անհավասարությունը և կանանց նկատմամբ վերարտադրվող մշակութային ճշումը, որ ստորադասում է աղջիկներին: Սեռով պայմանավորված արբորտները գենդերային անհավասարության հետևանքներից մեկն են միայն, որոնց օրենսդրական արգելքը սովորաբար չի լուծում խնդիրը. լայն մակարդակում մշակութային փոփոխությանն, իսկ անհատական մակարդակում վերաբերմունքի փոփոխությանն ուղղված միջոցառումները կարող են ավելի արդյունավետ և համակարգային լինել՝ հիմնախնդրի ծավալները կրճատելու և, գուցե, վերջնականապես լուծելու համար:

Հատկանշական է, որ արբորտների արգելքն այն եզակի թեմաներից էր, որը ՀՀ Կառավարությունը և իշխող քաղաքական ուժը

111. panarmenian.net. (2020, սեպտեմբեր 10). *Չորսաբայանը ճիշտ չի համարում արբորտների արգելքն առհասարակ. Պարզաբանել է նախաձեռնությունը*. վերցվել է՝ <https://www.panarmenian.net/arm/news/284986/>

112. Նույն տեղում

113. Barot, S. (n.d.). *A Problem-and-Solution Mismatch: Son Preference and Sex-Selective Abortion Bans*. Վերցվել է՝ <http://bit.ly/gutmacher-selective-abortion>

ոչ միայն չվարանեցին հանրայնորեն քննարկել, այլև բարձրաձայն որակեցին որպես հետադիմական և միջնադարյան նախագիծ¹¹⁴:

«...Որոշ երկրներում, որտեղ առկա են պոպուլիզմի և կտրուկ ազգայնականության աճ, արքրտների իրավիճակը կտրուկ վատթարանում է: Ուլտրապահպանողական ուժերը, որոնք ունեն կանանց ինքնավարության և նրանց վերարտադրողական առողջության վերահսկման օրակարգ, փորձում են ստիպել իրենց ֆունդամենտալիստական տեսակետը գենդերային դերերի վերաբերյալ: Նրանց մարտավարություններից մեկն այն է, որ արքրտների արգելքների միջոցով ստիպեն կանանց դիմել հղիության ընդհատակյա ընդհատման՝ նպաստելով արքրտների խնամքից հրաժարվելու, և սպառնալ կանանց կյանքին, վերարտադրողական առողջությանը, հանգեցնել հաշմանդամության և մահվան, ինչպես նաև մեծացնել մանկասպանության և մանկալքության դեպքերը»¹¹⁵

ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման բաժնի պետ Գայանե Ավագյան

2.4. Համավարակը և Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի թիրախավորումը

Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային մի շարք երկրներում, ինչպես նաև Հայաստանում պուտինամետ ուժերի և աջ պոպուլիստ քաղաքական ուժերի օրակարգերի առաջնիվան համար առանձին ուղղություն է դարձել ԱՄՆ միլիարդատեր Ջորջ Սորոսի հիմնադրած Բաց հասարակության հիմնադրամների միջազգային ցանցի տեղական գրասենյակների թիրախավորումը (Applebaum, 2020): Այս ուժերը ստեղծում են «արտաքին թշնամու» կերպարը, դրան կապակցում «ներքին թշնամու» պատկերը՝ առկա կամ հորի-

114. medialab.am. (2020, սեպտեմբեր 11). «Ես չեմ կարող ասել՝ եկեք արգելենք արքրտները, որպեսզի ընդհատակյա արքրտներ լինեն, ու կանայք մահանան ներքին արնահոսությունից». Գայանե Ավագյան. վերցվել է՝ <https://medialab.am/93230/>

115. Նույն տեղում

Նովի սոցիալ-քաղաքական խնդիրները բարդելով նրանց «հակա-պետական» գործունեության վրա¹¹⁶:

Ինչպես երևան բերեց մեր հետազոտությունը, կորոնավիրուսի համավարակի ողջ ընթացքում ԲՀՀ-Հայաստանի գործունեությունը դավադրության տեսությունների և արշավների առանցքում էր: Նախկին իշխանական էլիտաների (Հայաստանի երկրորդ և երրորդ նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի) օրակարգերի և նրանց հետ փոխկապակցված լրատվամիջոցների ու օլիգարխիկ միջավայրերի շուրջը հավաքված անհատները և խմբերը գործող իշխանություններին շարունակաբար մեղադրում էին «սորոսականության դավադիր, ազգակործան» նախագծերն իրագործելու մեջ: Այսպես՝ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը 2020 թվականի հուլիսին հայկական երեք հեռուստաընկերություններին տված հարցազրույցում, անդրադառնալով աշխարհաքաղաքական հարցերին և Հայաստանի վրա դրանց ազդեցությանը, հանրային դիսկուրս է նետում «սորոսիզացիա» տերմինը՝ մեկնաբանելով այն որպես գլոբալ քաղաքականություն. քաղաքականություն, որ ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ի առաջնորդությամբ ձևավորում է միաբնեռ աշխարհ, իսկ տնտեսական համակարգերի գլոբալիզացիան ուղեկցվում է արժեքային, քաղաքակրթական և մշակութային համակարգերի գլոբալիզացիայով¹¹⁷: Քոչարյանը ներմուծում է նաև «սորոսի սուրոգատներ» ձևակերպումը՝ նկատի առնելով հասարակական կազմակերպություններին, որոնք առաջ են մղում, ինչպես ինքն է պնդում, համընդհանուր արժեքներով աշխարհակարգ ստեղծելու օրակարգը: Ըստ էության, ժողովրդավարության և մարդու իրավունքների արժեքները հռչակելով իբրև վտանգավոր, Քոչարյանը դրանց հակադրում է Ռուսաստանի ու Չինաստանի «ճիշտ» ուղին՝ ազգայինը և ազգային ինքնությունը խորացնելը: Այս համատեքստում Քոչարյանը թիրախավորում և վարկաբեկում է ոչ միայն հասարակական կազմակերպություններին, այլև նրանց հետ իրական կամ ենթադրյալ կապակցվածությունն ունեցող հետհեղափոխական կառավարող ուժի ներկայացուցիչներին, որոնք ենթադրյալ հակաազգային, հակաեկեղեցական

116. Նույն տեղում

117. 5 TV Channel. (2020, հուլիս 29). ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հարցազրույցը հայկական երեք հեռուստաընկերություններին. վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=_dhzvuoohXU

գործունեություն են ծավալում՝ հանելով ազգային և եկեղեցական տարրերը մշակույթից ու կրթական ծրագրերից¹¹⁸:

Հայաստանում պուտինամետ քաղաքականությունների նշանավորող Քոչարյանը հատկապես 2018 թվականի հեղափոխությունից հետո (իսկ առավել ընդգծված՝ 2020 թվականի դարաբաղյան երկրորդ պատերազմից հետո) հանդես է գալիս ռուսաստանամետ քաղաքական մշակույթի պահպանության և խորացման հռետորաբանությամբ, ամեն կերպ ձգտում հանրությանը ներկայացնելու ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ իր անձնական մտերմիկ կապերը: Սրա մասին են վկայում նաև նրա հաճախակի հարցազրույցները ռուսաստանյան լրատվամիջոցներին, որոնց ընթացքում նա չի խորշում մի կողմից ստորադասել Հայաստանի ինքնիշխանությունը՝ առաջ մղելով Ռուսաստանից էլ ավելի մեծ կախյալության քաղաքական գիծը, մյուս կողմից թիրախավորել հասարակական կազմակերպություններին՝ ներկայացնելով նրանց իբրև «արտաքին ուժերի»՝ Արևմուտքի սպասարկուների:

Քոչարյանը Հայաստանի «սորոսիզացիայի» թեզի տակ հերքում է այն փաստը, որ ինքը տեղյակ է եղել իր նախագահության ընթացքում Բաց հասարակության հիմնադրամների հայաստանյան գրասենյակի գոյությունից՝ ներկայացնելով կազմակերպությանը որպես մարզինալ, ազդեցություն չունեցող՝ դրանով նսեմացնելով նաև վերջինիս տարիների աշխատանքը. «*Նրանք մարզինալ էին, ոչ ոք նրանց չէր ճանաչում/ընդունում: Ես չգիտեի, որ Սորոսի օֆիս գոյություն ունի: Կար ինչ-որ մի կազմակերպություն... Ինչքան հասկանում եմ օֆիս էլ չկար, տներից էին... [աշխատում]: Տեղի էր ունենում սողացող ներխուժում պետություն: Իրականում ես չգիտեի, որ նման օֆիս գոյություն ունի: Դրանք [...] մարզինալներ էին, որոնք չունեին ազդեցություն պրոցեսների վրա, և ես զարմացել էի, թե ինչպես են նրանք վերջին տարիներին այդպես հիմնավորվել»¹¹⁹:*

Քոչարյանի այս հռետորաբանությունն ամբողջությամբ տեղավորվում է կրեմլյան քաղաքականության՝ ԲՀՀ-ի և Ջորջ Սորոսի դեմ

118. Նույն տեղում

119. РБК. (2020, сентябрь 2). Роберт Кочарян - о возвращении в политику, Бархатной революции и протестах в Белоруссии. Интервью РБК. Կերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=gYmcMetvnxk&feature=emb_logo

տարվող արշավների տրամաբանության ծիրում¹²⁰: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Ռուսաստանում Հայաստանի հետհեղափոխական կառավարությունը մեկնաբանվում է իբրև «հակառուսական», ռուսական մեդիաներում կապվում արևմտյան ուժերի, մասնավորապես Բաց հասարակության հիմնադրամների գործունեության հետ՝ շահարկելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ կառավարության կազմում լինելու փաստը:

Իսկ Բաց հասարակության հիմնադրամների «անմիջական» առնչությունը կորոնավիրուսի համավարակի հետ իբրև թե հիմնավորվում է այն հանգամանքով, որ «Սորոսի հիմնադրամը Հայաստանին 600000 դոլար է տրամադրել կորոնավիրուսի դեմ պայքարի համար»¹²¹: Այս համատեքստում ռուսական մեդիաներն առաջ են տանում մի դիսկուրս, համաձայն որի. «Հայաստանն Ուկրաինայի հետ միասին միակ հետխորհրդային երկիրն էր, որ նման աջակցություն է ստացել Սորոսի կողմից հովանավորվող կազմակերպություններից»¹²²՝ ակնհայտորեն հղելով թե՛ հեղափոխության, թե՛ կառավարող ուժի վրա Բաց հասարակության հիմնադրամների ազդեցությանը: Հայաստանյան իշխանությունների՝ Ջորջ Սորոսի հիմնադրամի հետ փոխառնչության հարցը պարբերաբար հայտնվում է ռուսական պաշտոնական քարոզամեքենային ծառայող լրատ-

120. ԲՀ գրասենյակները 2015–ին ՌԴ դատախազության կողմից ճանաչվեցին անցանկալի և պարզապես փակվեցին արտասահմանյան ֆինանսավորում ստացող այլ հասարակական կազմակերպությունների հետ մեկտեղ: Այստեղ Սորոսին և ԲՀ գրասենյակին մեղադրում են դեռևս սկսած 2003–2004 թթ.: Ռուսաստանում ընդդիմադիր խմբերի (ՅՈՒԿՈՍ–ի ղեկավար Միխայիլ Խադարկովսկու) հետ համագործակցության և Կրեմլի դիտանկյունից մերձավոր արտասահմանում, այսինքն՝ հետխորհրդային երկրներում գունավոր հեղափոխություններ կազմակերպելու մեջ (Վրաստան, Ուկրաինա): Սորոսին և ԲՀ–ն ընտրելով Նշանառու թիրախ՝ նրանց համար հեշտանում է «բացատրությունը», թե ինչու են տեղի ունեցած հեղափոխությունները հաջողել: Ռուսաստանում Սորոսի դեմ արշավը մեծապես հակազենդերային (այդ թվում՝ հոմոֆոբ) շեշտ ունի՝ Նպատակ ունենալով հակադրվելու եվրոպական (արևմտյան) իրավաքաղաքական և մշակութային դաշտին և այս հակադրության վրա հենվելով՝ պահպանելու ՌԴ հակաժողովրդավարական համակարգն ու հետխորհրդային երկրների վրա դրա ծանրակշիռ աշխարհաքաղաքական ազդեցությունը: Ավելի մանրամասն տե՛ս Խալաթյան, Մ., Մանուկյան, Ա., Մարգարյան, Ն. (2020), *Հակազենդերային արշավների գործունեությունը, հռետորաբանությունը և նպատակները հետհեղափոխական Հայաստանում* (Ա. Ժամակոչյան, խմբ.): Սոցիոսկոպ:

121. times.am. (2020, հուլիս 31). *Փաշինյանն ու Սորոսի հիմնադրամը՝ անբաժանելի ընկերներ*. վեբգլե է՝ <https://times.am/?p=284049&l=am>

122. Նույն տեղում

վամիջոցների ուշադրության կենտրոնում՝ այն ներկայացվելով իբրև իշխանություն-ընդդիմություն հակամարտության էական ասպեկտ¹²³:

Միաժամանակ կառավարող ուժն ամեն կերպ հեռավորություն է(ր) գծում «Սորոսի» պիտակ դարձած գաղափարից՝ հաճախ վերարտադրելով հակաժողովրդավար ուժերի առաջ քաշած հռետորաբանությունը. «*Խուսափելով մարդու իրավունքների տեսանկյունից հակահրավապաշտպան խմբերի գործողություններին համարձակ գնահատական տալուց՝ պետական հաստատությունները և գործիչները, ըստ էության, աջակցում են վերջիններիս՝ թույլ տալով քաղաքացիական առաջադիմական խմբերի գործունեության դաշտի նեղացումը և դրա փոխարեն հանրային ակտիվության և քննարկումների դաշտում հակահրավապաշտպանների գերակայումը*»¹²⁴:

«Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանը Քսենյա Սոբչակի՝ «*ОСТОРОЖНО: АРМЕНИЯ! Будет ли революция и при чем тут Россия*» ռեպորտաժում փորձում է իշխանությունների՝ «սորոսականության» մեղադրանքը պրոյեկտել «սորոսականության» մեջ մեղադրողների վրա՝ պնդելով, թե հենց նրանք ենք գումարներ ստանում Ջորջ Սորոսի ֆոնդից՝ այս կերպ էլ ավելի վերարտադրելով և մնելով դավադրական և հակագենդերային ուժերի կողմից բանաձևված դիսկուրսը:

Կորոնավիրուսի համավարակի ընթացքում հակագենդերային արշավների ներկայացուցիչների կողմից բանաձևվեց «սորոսավիրուս»¹²⁵ հասկացությունը, որ մինչ օրս քաղաքական տարբեր համատեքստերում բերվում է հանրային դաշտ՝ ներկայացվելով իբրև կորոնավիրուսից ավելի վտանգավոր երևույթ:

Երբ հայաստանում կորոնավիրուսի համավարակը մեծ թափ առավ, արգելվեցին մեծամասշտաբ հավաքներն ու միջոցառում-

123. RTD на русском. (2021, апрель 22). *Цена перемен. Популизм и технологии борьбы за власть*. Վերցվել է՝ <https://www.youtube.com/watch?v=-DaxLv7yxMQ>

124. Խալաթյան, Մ., Մանուկյան, Ա., Մարգարյան, Ն. (2020), *Հակագենդերային արշավների գործունեությունը, հռետորաբանությունը և նպատակները հետհեղափոխական Հայաստանում* (Ա. Ժամակոչյան, խմբ.). Սոցիոսկոպ:

125. analitik.am. (2020, մարտ 19). *Սորոսի վաստակները հեղթական կեղծ դիմումն են ներկայացրել իմ դեմ. Նարեկ Մայյան*. վերցվել է՝ <https://bit.ly/3xkfR0w>

ները հանրային վայրերում, այդ թվում սահմանափակվեցին Հայ առաքելական եկեղեցում կազմակերպվող մարդաշատ պատարագները: Դավադրության տեսություններն առաջ մղող ուժերը այս որոշումը մեկնաբանեցին «սորոսականների» միջամտության և Հայ առաքելական եկեղեցու հանրային դերի նվազեցմանն ուղղված պայքարի տեսանկյունից¹²⁶:

Միաժամանակ ԲՀՀ Հայաստանն առ այսօր ավելի քան 1002000 ԱՄՆ դոլար է հատկացրել Հայաստանում կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարին աջակցելու և համավարակի հետևանքները չեզոքացնելու նպատակով՝ մասնավորապես կենտրոնանալով միայնակ տարեցների, հաշմանդամություն, քրոնիկ հիվանդություններ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, ընտանեկան բռնությունից տուժածների, փախստականների, ազգային փոքրամասնությունների, հատուկ կարիքներ ունեցող երեխաների և սոցիալապես խոցելի ընտանիքների իրավունքների պաշտպանության վրա:

126. analitik.am. (2020, մարտ 25). «Սորոսականները» եկեղեցու դեմ գրոհելու և ազգային բոլոր արժեքների ոտնահարման գործընթացն իրականացնելու համար հստակ դերաբաշխում ունեն. «Փաստ». վերցվել է՝ <https://bit.ly/3jNa8wL>

ԱՄՓՈՓՈՒՄ

Դավադրության տեսությունները և այդ տեսություններն առաջ մղող անհատները և խմբերն առավել տեսանելի են դառնում հանրային-քաղաքական անորոշությունների, սոցիալ-տնտեսական անկումների և ճգնաժամերի, բնական աղետների, ինչպես նաև պանդեմիաների պայմաններում: Դավադրական մտածողությունն առաջնորդվում է մարդկային ցանկությամբ՝ իմաստավորելու վտանգավոր և բարդ սոցիալական ուժերը, կապերը և երևույթները:

«Պարանոիդ ոճը ամերիկյան քաղաքականության մեջ» (The paranoid style in American politics) դասական դարձած էսսեում պատմաբան Ռիչարդ Հոֆշտատերը տեղայնացնում է դավադրությունների ծագումը միջխմբային գործընթացներում՝ պնդելով, որ դավադրությունները ոչ այնքան իրադարձությունների տարաբնույթ սպեկուլյացիաներ են, այլ աշխարհը և պատմությունն ընկալելու մտաեղանակ (Hofstadter, 1964):

Արևմուտքում, Արևելյան Եվրոպայում, հետխորհրդային երկրներում և այլուր հակաժողովրդավար քարոզչամեթոդները հղկվել են այնքան, որ չեն տարածում առօրյա կյանքին հակադրվող քարոզչություններ: Գործի են դրվում «միջին չափի ստեր», որոնք հանրություններին առաջարկում են հասու դառնալ այլընտրանքային իրականությանը, իրականություն, որ ձևավորվում է ժամանակակից քաղտեխնոլոգիական և մարքեթինգային արշավների միջոցով (Applebaum, 2020):

Վերջին տարիների տարբեր ուսումնասիրություններ երևան են բերում աճող ապատեղեկատվության ու դավադրության տեսությունների և ժողովրդավար քաղաքական ինստիտուտների թուլացման փոխառնչությունները: Ազատ տեղեկատվական հոսքերը, որ առանցքային նշանակություն ունեն ժողովրդավարությունների զարգացման համար, հաճախ վերածվում են ազատ

ապատեղեկատվական հոսքերի՝ վտանգելով ինչպես քաղաքական և քաղաքացիական ինստիտուտների առողջ գործառնությունը, այնպես էլ հանգեցնելով հանրային բևեռվածությունների, լարումների և վստահության հենարանների կորստի: Այդուհանդերձ, պետությունները հաճախ ապատեղեկատվության պայթյալի ներքո գործի են դնում խոսքի ազատության ճնշման գործիքներ և մեխանիզմներ՝ էլ ավելի ստորադասելով հանրային շահը:

«...Դավադրության տեսություններում միշտ առաջ է քաշվում երկակի հասարակության միտքը: Սա միշտ հասարակության պառակտման դիսկուրս է. կա լայն հասարակություն, և կա գաղտնի փոքր հասարակություն, որը կառավարում է լայն հասարակությանը: 18-րդ դարից սկսած՝ դավադրության տեսությունները հիմնված են մեղավորներ փնտրելու վրա: Բոլոր տեսությունները հանգում են մի բանի. ո՞վ է մեղավորը՝ հրեաները, մասոնները և այլն: ...Դավադրության տեսությունները նվազեցնում են քաղաքացու կամարտահայտման նշանակությունը, դելիգիտիմացնում են սուբյեկտին»¹²⁷:

Հասարակություններում աճող սոցիալ-տնտեսական անհավասարությունների և անարդարությունների, խտրականությունների, նեղ հանրային խմբերի ձեռքին իշխանության, կապիտալի և մեդիառեսուրսների շարունակական կենտրոնացումը համակարգային քննադատությունների և դիմադրական պայթյալների առանցքում են աշխարհի տարբեր անկյուններում նպաստելով հանրային գիտելիքի ձևավորմանը և ճնշված խմբերի շահի և իրավունքների բարձրաձայնմանն ու վերականգնմանը: Սրան զուգահեռ աչ ծայրահեղական, հակաժողովրդավար ուժերը և խմբերը, որ սովորաբար օգտվում են ռեսուրսների անհամաչափ բաշխումից և հաճախ ֆինանսական և մեդիառեսուրսների տիրապետողների շարքում են, գործի են դնում իրենց քաղտեխնոլոգիական ջանքերը և գործիքները՝ շրջանակելով վերը նշած հիմնախնդիրները տարաբնույթ դավադրության տեսությունների և ապատեղեկատվությունների ծիրում, մանիպուլացնելով հանրային գիտելիքն ու տրամադրությունները:

127. Դազարյան, Կ. (2020, դեկտեմբեր 21). «Դավադրապաշտությունը ստեղծում է անպատասխանատու մարդկանց հասարակություն».
media.am. վերցվել է՝ <https://media.am/hy/viewpoint/2020/12/21/25534/>

Այսպիսով, ամփոփելով ուսումնասիրությունը, կարող ենք առանձնացնել մի քանի առանցքային եզրահանգումներ.

- 1 | Կորոնավիրուսի համատեքստում դավադրության տեսությունների և հակազենդերային արշավների մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն գլոբալ չափում և խորապես կապված են աշխարհի տարբեր մայրցամաքներում աչ պոպուլիզմի և հակաժողովրդավար ուժերի զարթոնքի հետ: Դրանք լայն տարածում գտան կորոնավիրուսի համավարակի ընթացքում և երկրից երկիր ձեռք բերեցին տեղական՝ ներքաղաքական օրակարգերի սպասարկման նշանակություն:
- 2 | Դավադրության տեսություններ տարածող խմբերը և անհատները, երկրի սոցիալ-քաղաքական համատեքստով պայմանավորված, առաջ են տանում սեփական փոքր ու մեծ քաղաքական, տնտեսական, մեդիա և այլ շահեր ու օրակարգեր՝ դրանք հրամցնելով իբրև հանրային շահի և մարդկանց իրավունքների պաշտպանության գործունեություն:
- 3 | Համավարակի համատեքստում թափ առած դավադրությունների տեսությունները պարարտ հող դարձան աչ ծայրահեղական ուժերի ու խմբերի և նրանց հակաժողովրդավար հռետորաբանության տարածման համար: Ավտորիտար և կիսաավտորիտար պետություններն օգտագործեցին համավարակն իրենց ռեպրեսիվ քաղաքականությունները և ազատությունների սահմանափակումներն առաջ տանելու համար: Մյուս կողմից, առավել ժողովրդավար պետություններն էլ չհրաժարվեցին հակաժողովրդավար և մարդու իրավունքի սկզբունքներին հակասող սահմանափակումներ մտցնելուց, չհարցադրեցին իրենց ընդունած սահմանափակումների անհրաժեշտությունն ու արդյունավետությունը, իսկ հետագայում հանրությանը հաշվետու չեղան սեփական քաղաքականությունների և կիրառած միջոցների արդյունավետության մասին:
- 4 | Դավադրական այս տեսությունները հիմնվում են «արտաքին թշնամու» (ինչպես, օրինակ՝ դավադիր Արևմուտքի և Եվրոպայի, Արևելքի, Իսրայելի, Տորջ Սորոսի, Բիլ Գեյթսի և այլն) կերպարի կառուցման վրա, դրան կապակցում և թիրախավորում են «ներքին թշնամիներին, հակապետական ուժերին, ազենտներին» (ինչպես, օրինակ՝ առաջադիմական քաղաքացիական հասարակություն, իրավապաշտպաններ, LQFS

մարդիկ, հետհեղափոխական կառավարող ուժ)՝ այդպիսով հեշտացնելով ներքաղաքական կեղծ օրակարգերի շուրջ հանրային բևեռվածությունը:

- 5** | Կարող ենք դիտարկել, որ կորոնավիրուսի համավարակի պայմաններում մարդու իրավունքներն ու ազատություններն աշխարհում հետընթաց են ապրել: Տարբեր երկրներում հայտարարված արտակարգ դրության մասին որոշումներն այս կամ այն կերպ սահմանափակել են խոսքի ազատությունը՝ դավադրությունների տեսությունները մեղմելու կամ դրանց դեմ պայքարի անվան ներքո կամ ակնկալիքով: Սակայն արդեն այսօր տարբեր վերլուծություններ ցույց են տալիս, որ այդ միջոցները արդյունավետ չեն եղել չեզոքացնելու կամ նվազեցնելու դավադրությունների տեսությունների հռետորաբանությունը և դրանց հասցրած բացասական ազդեցությունը հանրային գիտելիքի և տրամադրությունների վրա:
- 6** | Չնայած այն հանգամանքին, որ կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարում առաջադիմական քաղաքացիական հասարակության կազմակերպությունները Հայաստանում իրականացրել են բազմաթիվ կարևոր միջոցառումներ և մատուցել են սոցիալական աջակցության տարբեր ծրագրեր, նրանք դարձյալ հայտնվել են դավադրությունների տեսություններ և ապատեղեկատվություններ տարածող խմբերի և անհատների թիրախում: Այս շրջանակը գրեթե նույնությամբ համընկնում է իրավապաշտպանների, կանանց և գենդերային հարցերով զբաղվող ակտիվիստների դեմ պայքարող, գենդերային և սեռականության հարցերը հանրային տրամադրությունների շահարկման գործիք դարձրած խմբերի հետ: Այս խմբերն իրենց արշավներում ներգրավում էին տարբեր մասնագետների և այսպես կոչված փորձագետների (բժիշկ, լրագրող, իրավաբան)՝ իրենց խոսքին լրացուցիչ կշիռ տալու և հանրային վստահությունն ձեռք բերելու նպատակով: «Հանրային ճանաչում» ձեռք բերած այդ անհատները հետագայում շարունակում են իրենց գործունեությունը՝ սպասարկելով այս կամ այն [քվազի] քաղաքական ուժի շահերը:
- 7** | Կորոնավիրուսի համավարակի ընթացքում ի հայտ եկած մանիպուլյացիոն հռետորաբանությունը, ապատեղեկատվությունը, նեղ քաղաքական և քվազի քաղաքական շահերով ուղղորդ-

ված կեղծ տեղեկատվությունը ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում զուգորդվում էին ներհատուկ՝ ներքին քաղաքական և հակազենդերային օրակարգերով: Կորոնավիրուսի համավարակի շրջանակում ապատեղեկատվության, կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվության տարածումն էլ ավելի էր ընդլայնվում, երբ հանրային քննարկումների դաշտում էր հայտնվում որևէ նշանակալի քաղաքական իրադարձություն, զենդերային հարցերին կամ մարդու իրավունքներին առնչվող զգայուն հարց:

- 8 |** Քովիդ-19 համավարակի դեմ պայքարում հայաստանյան կառավարության որդեգրած քաղաքականությունը խնդրահարույց էր նախ և առաջ հանրության հետ հաղորդակցության տեսանկյունից. այն ոչ հետևողական էր, խոսքային և վարքային իմաստով ոչ համարժեք իրավիճակին, հաճախ ընդունված որոշումները լրացուցիչ մեկնաբանության և հիմնավորման անհրաժեշտություն ունեին, իսկ երբեմն թվում էին անտրամաբանական: Ի հակադրություն դավադրության տեսություններ տարածող խմբերի, որոնք իրենց արշավներում ներառում էին բժիշկների և այսպես կոչված մասնագետների, կառավարությունը շատ ուշ սկսեց ներգրավել առողջապահության ոլորտի մասնագետներին հանրության հետ հաղորդակցության մեջ: Ավելին՝ հանրային առողջության հարցը և դրա համար անհրաժեշտ պայքարը հաճախ սահմանափակվել են միայն մարդկանց վրա անհատական պատասխանատվություն դնելով, իսկ դրանց չհասնելը պայմանավորվել է անհատների մեղավորությամբ:

